

Հրատարակ, Բագուայ Հայոց Կուլտուրական Միութեան  
Հրատարակչական Մասնաճիւղի № 22

636  
L-69

# ԱՆԱՍՆԱՊԱՅՈՒԹԻՒՆ

I

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԵՒ  
ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ  
ՄԻԶՈՑՆԵՐԸ:

(Ի. Բ. ԼԻԼԲԱՄՈՒԴՐՈՎ)

ՓՈԽԱԴՐԵՑ

Գ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА

Издательской Секции № 22

## СКОТОВОДСТВО

Уходъ за домашн. живот. и сред. защиты ихъ отъ болѣз.

(И. Б. Любомудровъ)

Пер. К. К. Меликъ-Шахназарянца.

Электропечатня газ. „БАКУ“

Баку 1911 г.

95

03 MAY 2013

ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹ  
ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԵԱՄԲՐ

## ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍՈԵԼ

ՀԵՏԵԽԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵ

1. «Պատանեկան Գրադարան» №№ 1—17  
հրաքանչուր գիրքը . . . . .
2. Խրեստոմատիա—Մ. Մանդինեանի . . . . .
3. Դիւան Հայոց պատմութեան—Գիւտ ա. ի.  
Աղանեանի . . . . .
4. Բանաստեղծութեաներ—Յ. Յովհաննի-  
սեանի . . . . .
5. Վէրք Հայոստանի—Խ. Արովեանի . . . . .
6. Վեհէլմ Տէլլ—Վ. Օսրօզուկու . . . . .
7. Ծրինի—Վ. Օսրօզուկու . . . . .
8. Գործնական շերամագալութիւն—Կ. Մե-  
լիք-Շահնեազարեանի . . . . .
9. Բամբակի մշակութիւնը—Ե. Տարածի-  
նովի (թարգմանութիւն) . . . . .
10. Մանր գարկի հաստատութիւնները . . . . .
11. Բուսական աշխարհ—Կ. Մելիք-Շահնա-  
զարեանի . . . . .
- ԴՐԻԱԳՆԵՐ ՀԱՅ. ՊԱՏՄՈՒԹ. №№ 1—11
12. Արտաշէս Երկրորդ—Վ. Փափազեանի . . . . .
13. Գազիկ Երկրորդ նոյնի . . . . .
14. Վարդանանց պատերազմը—նոյնի . . . . .
15. Տրդառ և Գրիգոր Լուսաւորիչ—Մ. Առա-  
նելեանի . . . . .
16. Մահակ և Մեսրոպ—Վ. Փափազեանի . . . . .
17. Վահան Մամիկոնեան—Մ. Առանելեանի . . . . .
18. Թորոս Խշան Վ. Փափազեանի . . . . .
19. Աւան Երկրորդ նոյնի . . . . .

636  
L-69  
Մ.

30 JUL 2010

Հրատարակ. Բագուայ Հայոց Կուլտուրական Միութեան  
Հրատարակչական Մասնաճիւղի № 22

636  
Հայութ

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

### I

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԵՒ  
ՀԻՒԱՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ  
ՄԻԶՈՑՆԵՐԸ

(Ի. Բ. Լինբալուկրով)

ՓՈԽԱԴՐԵՑ

### Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА

Издательской Секции № 22

### СКОТОВОДСТВО

Уходъ за домашн. живот. и сред. защиты ихъ отъ болѣз.

(И. Б. Любомудровъ)

Пер. К. К. Меликъ-Шахназарянца.

Электропечатня газ. „БАКУ“

Баку 1911 г.

## Մ Ա Ս Ն I.

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԶԻՄՈՒՆՔԸ:

### Ա. ԿԵՐԱԿՐԵԼԸ:

Ընտանի կենդանիներ բազմացնելու շահը կախւած է զլիսաւորապէս լաւ և պատշաճ կերակրից: Դրա համար էլ գիւղատնտեսութեան վերաբերեալ կենդանիներ խնամելիս, պէտք է հոգալ ոչ միայն սերունդը ազնւացնող լաւ որձեր ընտրել, օրինակ, պինդ կազմ ունեցող ձիեր, կաթնատու կռվեր, բուրդը ընտիր ոչխարիներ, շուտ չաղացող խոզեր և այլն, այլ և հարկաւոր է ուշ դարձնել նաև պատշաճ և կենդանու բնութեան համապատասխան կերակրի վրայ, որից մեծապէս կախումն ունի և իրեն՝ կենդանու գոյութիւնը:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԲՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ:

Եթէ կենդանիներին բաւականաչափ կեր են տալիս, բայց այդ կերը համապատասխան չէ նրանց բնոյթին, այդպիսի խնամատարութիւնը ոչ միայն վատ պէտք է համարել, այլ և զանազան հիւանդութիւնների ենթարկելու ճանապարհ բացող: Այդ բանի վրայ գիւղացի անտանապահները շատ քիչ են ուշադրութիւն դարձնում, որի համար էլ նրանց սպառած կերից շատ քիչ օգուտ են վերցնում և բացի այդ, իրենց հօտը կամ նախիրը ենթարկում են զանազան հիւանդութիւնների: Դրա համար

էլ անասուններին կերակրելիս, պէտք է ուշադիր լինել, որ տւած կերը այնպիսի կազմ ունենայ, որ ամեն կերպ համապատասխան լինի կենդանութեամբին, ճաշակին, ծառայէ որոշւած նպատակին, նրան գուրեկան լինի, մի խօսքով, նրա բոլոր կարիքներին բաւականութիւն տայ:

Դրա համար էլ ձիուն պէտքէ այնպիսի կեր, որ նա փոքր ծաւալ ունենայ, բայց շատ սննդարար լինի, որովհետև նրա փոքրիկ ստամոքսը չէ կարող մեծ քանակութեամբ քիչ սննդարար կեր տեղաւորել և նրանից իր համար այնքան սննդարար նիւթ վերցնել, որքան նրան պէտք է կեանքը պահպանելու մշտական ծանր աշխատութեան ժամանակ: Այդ իսկ պատճառով ձիու կերը պիտի լինի գլխաւորապէս հատիկներից և լաւ չոր կերակրից, ինչպիսիք են խոտն ու առևյուղը կամ կորնկանը (կլեվեր): Կարտոֆիլ, ճակնդեղ, գազար կարելի է տալ ձիերին, բայց զրանք մի աննշան մաս պիտի կազմեն տրւելիք միւս սննդարար կերակրի, մանաւանդ ծանր աշխատութեանց ժամանակ:

Եզչիւրաւոր անասունը իր բնաւորութեամբ պատկանում է այն կենդանիներին, որոնք սննդում են քիչ սննդարար նիւթ ունեցող կերակրով. նա մեծ քանակութեամբ կեր է պահանջում, որ մի բանով կարողանայ իր ահագին ստամոքսը լցնել և հարկաւոր սննդարար նիւթերը նրանից ձեռք բերել: Դրա համար էլ ծղօար, խոտը, արմատապտուղ բոյսերը, այն է, կարտոֆիլը, ճակնդեղը, գազարը և մի քանի գործարանական տականքներ, ինչպէս դիրդը (տիլը օղի քաշելուց), ճակնդեղի մնացորդները համաշափ խառն չոր կերի հետ եղջիւրաւոր անասունի համար ընտիր կեր են կազմում: Միայն միքանի գէպքում, օրինակ, ծննդկան կոյերին, չաղացնելիք եղներին կարելի է աւելացնել փոքր քանակութեամբ հացահատիկ, բայց նախապէս աղած, փշտած, թրջած, որպէսզի

հատիկները ստամոքսից ու աղիքներից անցչկենան առանց մարսւելու և անասունի առողջութեանը վաս չբերեն.

Ոչխարներին բնական, այսինքն, իրենց բնոյթին համաձայն կերակրելը նոյնն է, ինչ որ եղջիւրաւոր անասունին, միայն թէ կերը պէտք է չոր ու լեռնային տեղերում բուած, աւելի սննդարար խոտերից կազմւած լինի: Ոչխարները քնքոյց ու հոտաւէտ բոյսեր են սիրում, ջրջրոտ կերը նրանց վասակար է, ուստի արմատապտուղ բոյսերը և գործարանական մնացորդները մեծ զգուշութեամբ պիտի նրանց տալ: Ոչխարները եղջիւրաւոր անասուններից աւելի լաւ են հատիկները մարսում, ուստի պէտք է, ինչպէս հարկն է, պատրաստել և այնպէս սովորական կերի հետ տալ:

Խոզերի, ինչպէս ամեն բան ուտող կենդանու, կերի ընտրութիւնը շատ հեշտ է, միայն որոշ պատրաստութիւն է պահանջում, ինչպէս, եփել, կտորել, փշրել:

Նայելով կերի տեսակին, այդ տեսակ կենդանու կերակուր պատրաստելը կարիոր է նաև այն տեսակէտից, որ խոզերը ամեն մի կերակուր ագահութեամբ կուլ են տալիս, առանց ատամներով ծամելու և բաւականաչափ լորձունքի հետ խառնելու: Չոր ու պինդ կերը, ինչպէս հացահատիկները, (ցորեն, գարի, եփիպացորեն) ամբողջովին անպէտք են խոզի համար, որովհետեւ առանց մարսելու անց են կենում մարսողական խողովակներից, աղիքներից, որով նրան այս ու այն հիւանդութեան են արամագրում: Խոզերի համար արմատապտուղներն ու գործարանների թափթփուկները ամենալաւ կերն են կազմում:

### ԿԵՐԱԿՐԻ ՔԱՆԱԿԸ:

Ինչպէս կերակրի որակը, այնպէս էլ նրա քանակը շատ տարբերում են, նայելով կենդանու տեսակին ու նրա ինչ բանի ծառայացնելուն: Կերակրի այն քանակը,

որ միմիայն ծառայում է կենդանու կեանքի պահպանութեան, ասւում է էական կերակուր: Նոյն քանակի կերակուրը, որ ոչ միայն կենդանու կեանքն է պահպանում, այլ բացի դրանից, նպաստում է և րա հասակի աճելութեան, ծանրութեան, նրա մէջ աշխատանքի ոյժ պատրաստելուն և այս ու այն արդիւնքը արտադրելուն, ինչպէս, բուրդ, կաթ, ասւում է արդիւնաբեր կերակուր: Իհարկէ կերակրի քշութեան ժամանակն էլ կենդանիները կարող են երկար ժամանակ տպել և մինչեւ անգամ քիչ ու միչ արդիւնք հասցնել, ինչպէս ժլատութեամբ պահած, հալումաշ եղած կովերը՝ որոշ քանակի կաթ, ոչխարները՝ բուրդ, ձիերը՝ աշխատանք ևայլն, միայն թէ այդպէս կերակրելը, երբ անասունը իր միսն է կրծում, չէ կտրող ոչ միայն արդիւնաբեր ասւել, այլ և էական:

Անասունների կանոնաւոր խնամատարութիւնը միմիայն հասկանալի է այն մաքով, երբ կենդանուն այնքան կերակուր է տրում, որ նա առոյզ տեսը է ունենում և նրա կազմւածքի մէջ աննպաստ փոփոխութիւն չէ: Նկատում: Առհասարակ պէտք է աչքի առաջ ունենալ, որ լաւ սննդւած կենդանիները աւելի քիչ են ենթարկուում հիւանդութեանց, գեռահասները լաւ են կազմակերպուում և արագ մեծանում: Նիհար, քաղցած անասունները արօտատեղում խտրութիւն չեն դնում լաւ ու վնասակար բայսերի մէջ, չեն կարողանում բոլոր վնասակար ազդեցութիւններին դիմանալ, դրա համար էլ յաճախ ենթարկուում են այս ու այն հիւանդութեան: Բայց այն ևս կայ, որ չափազանց գիրացնելն ևս հիւանդութեանց տրամադիր է անում. գէր կովերը քիչ կաթ են տալիս, նրանց ծնունդը փոքրահասակ է սովորաբար և բնականից քիչ գարգացած: Այս ու այն անասունի կերի իսկական քանակը որոշելը շատ գժւար է. այդ կախած է ոչ միայն կենդանու ցեղից, տեսակից, իր մեծութիւնից, այլ և ամեն մի

կենդանու առանձնայատկութիւնից. այսպէս, տեսնում ենք, տեղական խողի համար ծառայող էական կերի յայտնի քանակը անգիւական ցեղի խողի համար շատ անգամ բաւական է, ինչպէս արդիւնաբեր կերակուր:

Ընդհանրապէս իբրև կանոն ընդունւած է, որ կենդանի անասունի ամեն մի 100 ֆունտ քաշին օրական պէտք է էական կերակուր տալ, այն է, անասունի կեանքը պահպանելու համար, առանց նրա յատկութեանց վնասելու, մօտ մի և կէս ( $1\frac{2}{3}$ ) ֆունտ չոր խոտ, կամ այնքան ուրիշ որ և է կեր, որ նրա մէջ պարունակող սննդարար մասին համապատասխանի. իսկ արդիւնաբեր սննդի համար պէտք է տալ մօտ 3 ֆունտ ( $3\frac{1}{3}$ ) ամեն մի 100 ֆունտ կենդանու քաշին:

Սննդի քանակի աւելացնելը միմիայն վերաբերում է սննդարար մասերի քանակի աւելացնելուն, և ոչ թէ սննդանդեան նիւթի ծաւալին, որը չափաք է շատ տարբերվի գիւղատնեսութեան մէջ պահուղ անասունների էական կերի ծաւալից, այն է չոր կամ մարգագետնի կանաչ լաւ խոտից: Դրա համար էլ չոր խոտից պակաս սննդարար կեր տալով, ինչպէս ծզօտը (քիւլաշը, լամբան) հարկաւոր է սննդարարութեան կողմից պակասորդ մասը լրացնել ոչ թէ մեծ ծաւալով, այլ համապատասխան չափով այնպիսի կերով, որը շատ սննդարար նիւթեր ունենայ մէջը, օրինակ, 10 ֆունտ խոտին փոխարինելու համար, պէտք է 20 ֆունտ ծզօտ, բայց դրանից կերակրի ծաւալը կրկնակի կմեծանայ, դրա համար էլ պէտք է տալ 10 ֆունտ ծզօտ, իսկ սննդարարութեան չափը պահպանելու և խոտի չափին հաւասարացնելու համար նաև ուրիշ աւելի սննդարար կեր, օրինակ, հացի ալիւր, թեփ, քուսպ, ևայլն:

Հաշւած է, որ 10 ֆունտ խոտը իր սննդարարութեան կողմից համապատասխանում է

40—50 ֆունտ մարգագետնի խոտին (կանաչ),

- 40—45 Փունտ թարմ, ծաղկած կորնկան,  
 40 " չոր կորնկան (քլևերъ),  
 40—45 " թարմ առւոյտին (եօնջայ) ծաղկելուց  
     առաջ,  
 9 " չոր առւոյտին,  
 37—40 " թարմ իշառւոյտին (Эспарцетъ),  
 9 " չոր  
 43—45 " թարմ հնդկացորենին (гречиха),  
 10 " չոր  
 26—30 " ցորենի ծղօտին (քիւլաշ),  
 30—35 " հաճարի  
 18—22 " գարու և վարսակի ծղօտին,  
 15—18 " սիսեռի  
 15—20 " կորեկի  
 10—12 " հացաբոյսերի տականըին,  
 20 Փունտ եզիպտացորենի (սմինդրի) տերեներին ու  
     ցօղունին,  
 18—22 Փունտ կարտոֆիլի,  
 26—30 " ձակնդեղի և գաղարի,  
 4—5 " հացաբոյսերի հատիկների,  
 6—7 " թեփի,  
 4—6 " քուսպի,  
 10—11 " հացի օղի քաշելիս մնացորդի,  
 35—45 " կարտոֆիլի օղի քաշելուց մնացորդի.  
 25 " ձակնդեղի մզւածքի:

ԻՆՉՊԵՍ ՊէՏՔ է ԿԵՐԱԿՐԵԼ.

Ամեն մի կերակուր ոլեաք է ըստ կարելոյն կանո-  
 նաւոր տալ և առանց բաժինը պակասեցնելու, կերակրի  
 քանակի աւելացնելը կարող է աեղի ունենալ միայն մի  
 քանի գէպքում, օրինակ, էզերի համար, երբ նրանք կերա-  
 կրում են իրենց փոքրերին, և անասուններին գիրացնելու  
 գէպքում:

Ամեն մի պակասեցրած բաժինը կենդանուն վնասե-  
 լով, վնաս է բերում և իրեն անասնատիրոջ, որը անկա-  
 րելի է լինում հեռացնել, մինչև անգամ կրկնակի կեր տա-  
 լով, որովհետեւ կովը ընդ միշտ ցամաքում է, բուրդը քչա-  
 նում, կենդանին լղարում, աշխատանքի համար թուլա-  
 նում: կերի քանակի յաճախ փոփոխելն ևս վնասակար  
 ազդեցութիւն է անում: երբ կերը շատ է լինում, առա-  
 տօրէն տալիս են, իսկ պակաս ժամանակ՝ անասունին  
 քաղցից սպանում: եթէ անասնատէրը վաղօրօք չէ կարո-  
 ղանում իր անասունների համար բաւականին պաշար պատ-  
 րաստել, երկու չարփի փոքրագոյնը ընտրելով, լաւ է  
 նախապէս իր անասունների թիւը կրծատէ, իսկ միատե-  
 սակ մեծ քանակութեամբ կեր ունենալուց, օրինակ, կար-  
 տոփել, եայլն, նա աւելի կերը պիտի ծախէ և.ուրիշ չոր  
 կեր ձեռք բերէ, օրինակ, ծղօտ, որպէսզի հաւասարակշռու-  
 թիւն պահպանւի չոր ու թաց կերի մէջ, որը անհրաժեշտ  
 է կենդանու սննդի համար:

Ինչ վերաբերում է կերակուր տալու ժամանակին,  
 այդ կախումն ունի անասնի սովորութիւնից, միայն պէտք  
 է միշտ հետեւել միենոյն ժամին կերակուր տալ և օրւայ  
 սննդի քանակը չփոքրացնել, որովհետեւ անասունը իր  
 կերը ստանալու ժամին վարժւելով, նրա ախորժակը  
 գրգռում է նոյն սովոր ժամին և կերը մարսելու կա-  
 րողութիւնը զօրեղանում է, այն ինչ, իր ժամանակին բաւ-  
 ականութիւն չտալով, թուլանում է թէ մինն և թէ միւսը:

Սոյնպէս չպէտք է կերակուր տալ քանի որ ախոր-  
 ժակ չունի. ախորժակը բացւում է, երբ ստամոքսը գա-  
 տարկ է: Ուտելու գրգիռը յաճախ երկում է թեթեա-  
 մարս կեր տալիս, ընդհակառակը դժւարամարս կերի  
 ժամանակ շատ քիչ է այդ գրգիռը: Դրա համար էլ, նայե-  
 լով կերի մարսելու աստիճանին, պէտք է յաճախ, ուշ  
 ուշ տալ բաժինը: Դժւարամարս կերը լաւ է գիշերը տալ,

որպէսզի անասունը զիշերւայ ընթացքում ժամանակ ունենայ մարսելու: Բաժինը չպէտք է շատ մեծ լինի, որովհետև անասունները չեն սիրում, երբ նրանց աւաջին միևնոյն կերը երկար ժամանակ ընկած է: Իբրև կանոն պիտի ընդունել, որ լաւ է կերակուրը քիչքիչ տար, բայց յաճախ, քան մեծ բաժիններով, բայց ուշ ուշ:

### ԱՆԿԱՆՈՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ:

Եթէ անասունը վատ կերակուր է ընդունում, քան նա պիտի ստանար իր բնոյթին համեմատ, այն ժամանակ նա իր լաւ յատկութիւններից շատը կորցնում է, իր յաջորդ սերնդին չէ տալիս, չէ կարողանում վնասակար ազգեցութիւններին դիմադրել և հեշտութեամբ է ենթարկում հիւանդութեանց:

Օրինակ, ընտիր ցեղի մատակները, եթէ կերակրում են եղջեւրաւոր անասունների սովորական կերով, ոչ միայն կորցնում են իրենց գեղեցկութիւնը, ոյժը և կազմը, այլ և թոյլ սերունդ են արտադրում: Առհասարակ դաշտավայրում, խոնաւ արօտատեղում կամ այդպիսի խոտահարքից ստացւած կերով սնւած ձիերը լինում են անշնորհք, ծանր, մազը կոշտ, երկայն, փորը մեծ, դրանք թէ շատ քիչ դիմացկուն են լինում և թէ շատ քիչ ըմբռնող, միխոսքով, ընդունում են այնպիսի յատկութիւններ, որոնք յատուկ են եղջեւրաւոր անասուններին:

Արաբական աշխոյժ, համկացող, գեղեցիկ ձիերը հացահատիկներից և ընտիր խոտից բաղկացած մնունդի շնորհիւ լաւ պահպանում են և յաջորդ սերնդին տալիս իրենց յատկութիւնները: Լեռնային տաւարը նմանապէս աննդարար կերի շնորհիւ պահպանում է իր ամուր կազմածքը և վայելուչ տեսքը, ինչպէս շվեցարական կամ տիրողեան տաւարը, որը սննդւել է խոնաւ արօտատեղերի փարթամ ու ջրջրոտ խոտերով, աւելի կոպիտ տեսք ունի,

ծանր է, տալիս է թէկ տռատ, բայց ջրալի կաթ, ինչպիսին է հոլանդական ցեղի կովը:

### ԶՈՐ ԿԵՐԻ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ ԹԱՅՑԻ ՀԵՏ:

Ինչպէս սննդեան նիւթի ծաւալի, այնպէս էլ թաց ու չոր կերի քանակի մէջ որոշ հաւասարակշռութիւն պիտի պահպաննել: Չափազանց ջրջրոտ կերը, ինչպիսին է կարտոֆելը, ճակնդեղը, ճաճան, օղեհանութեան մնացորդները, առանց հարկաւոր չոր կեր խառնելու, թուլացնում են մարսողութիւնը և զանազան հիւանդութիւններ առաջանում, օրինակ, խոնաւախտ, (մօքրեց) փորլուծութիւն ձիերի մէջ, ևայլն: Նոյնպէս բացառապէս չոր կերով սննդուգելը դժւարացնում է ու գանդաղեցնում մարսողութիւնը և անասուններին շատ հիւանդութեանց հնթարկում:

Իբրև միջին ճանապարհ չոր և ջրջրոտ կերի կարող է ծառայել կանաչ կերը: Հետագօտութիւնները ցոյց են տւել, որ թարմ կերպով անասունին ուտեցրած և ոչ շատ խոնաւ տեղից վեցըրած կանաչ կերի 100 ֆունտի մէջ, 75 ֆունտը ջուր է և միայն 25-ը պինդ ու չոր մաս: Հետևաբար կարտոֆելով, ճակնդեղով կամ օղեհանութեան մնացորդով սննդւող տաւարը, քանի որ այդ կերի 100 ֆունտից 90-ը ջուր է և միայն 10 ֆունտը պինդ մասեր, պէտք է այդպիսի կերի ջրային մասերը փչացնելու համար համեմատական չափերով չոր կեր ևս ընդունի, այն է խոտ կամ ծղօտ:

### ԿԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ:

Գիւղատնտեսը ամեն ժամանակ միջոց չունի իր անասուններին այնպիսի կեր տալու, որը բնութիւնը սահմանած է նրանց համար կամ ինչ նպատակի համար պահում է այդ անասուններին, օրինակ, կաթը շատացնելու չափացնելու, ևայլն: Դրա համար էլ նա պէտք է աշխատի

տալիք նիւթերի խառնուրդը այնպէս յարմարեցնել, որ  
նա իւր նպատակին հասնի: Պէտք է նկատել, որ ամեն  
մի կերի արժանիքը բարձրանում է նպատակայարմար  
պատրաստելուց: Կերը պատրաստելու ձևերը շատ են:  
Քննենք մեզանում սովորական ձևով տրող եղանակները  
և ցոյց տանք, թէ ինչպէս պէտք է անւի, որ կերի  
սննդարար մասերը շատացնելով և դիւրամարս շինելով,  
միաժամանակ անասունի առողջութեան համար վնասա-  
կար հետևանքներ չունենայ:

ա) Ծղօթի մանրունիլ—դարմանը և խոտի թեփի  
կամ ալրի հետ խառնուրդը հեշտացնում է անասուններին  
կերակրելու եղանակը, դրանք թէ դիւրամարս են և թէ  
հեշտութեամբ են միւս կերերի խառնում: Միայն պէտք  
է որոշ կանոններ պահպանել: Զիերը պէտք է աւելի  
մանր կերակրուր ստանան, իսկ տաւարի, ոչխարի կերը,  
որոնք ծամելուց և կերակրուրը կուլ տալուց, նորից այդ  
յետ են բերում և որոճում, պէտք է աւելի երկայն լինի  
օրինակ 2—3 վերշոկ: Որպէսզի աւելի պարզ լինի, թէ  
ինչու այդպէս պէտք է լինի, բացատրենք համառօտ  
որոճալու մեխանիզմը: Տաւարի կամ ոչխարի առանց կա-  
նոննաւոր ծամելու կուլ տւած կերակրուրը, որը միայն  
թեթև կերպով կրծկրծւել է ու լորձիւնքով թաթախւել,  
մտնում է նրանց առաջին ստամոքսը (թափանը), իսկ մի  
մասը երկրորդ ստամոքսը. կենդանու հանգստութեան  
ժամանակ այդ ստամոքսների մէջ կերակրուրը փափկանա-  
լով, անասունը ուզած ժամանակը, կտոր կտոր, հաւի ձևի  
մեծութեամբ վերադարձնում է բերանը, որտեղ լաւ որո-  
ճալուց, լորձիւնքի հետ խառնւելուց յետոյ, կրկին կուլ  
տալով, մտնում է երրորդ և չորրորդ ստամոքսը, որտեղ և  
կտարաւում է բուն մարսողութիւնը: Դրա համար էլ, որ-  
պէսզի յիշւած կտորները կարողանան այնպէս պատրաստ-  
ել և որոճալու համար բերանը վերադարձ, պէտք է

որ կերը թէ չափազանց մանր և թէ փուխր չլինի, որով-  
հետև այդ գէպքում տաւարը չէ կարող որոճալ, ուստի  
առաջին և երկրորդ ստամոքսում հաւաքւած կերակուրը,  
առանց կանոնաւոր որոճալու և լորձիւնքի հետ խառնւելու,  
մտնում է երրորդ ստամոքսը և այդտեղ զրքի մէջ եղած  
թերթերի նման այդ ստամոքսի ծալքերում հաւաքւելով,  
պնդանում է: Կանաչ կերի մանրելը միայն պէտք է այն  
ժամանակ, երբ զարնանը խառնում էնք չորի հետ, ինչ-  
պէս դարմանի կամ խոտի, որպէսզի անասունը չորից  
կանաչի անցնելիս վատ հետևանք չունենայ:

բ) Արմատապտուղների մանրելը, (կարտոֆելի, ձա-  
կընդեղի, գաղարի, ևայն): Արմատապտուղները չպէտք է  
ամբողջովին մեծ մեծ կտորած անասուններին տալ,  
որովհետև հեշտութեամբ դրանք կարող են որկորումը  
մնալ և կենդանուն խեղդել, իսկ կուլ գնացածները շատ  
գժւարութեամբ են մարսում: Ինչքան արմատապտուղը  
պինդ է, այնքան նա աւելի մանրել է պահանջում: Ման-  
րելու երկու եղանակ կայ, կտորներով և շերտ շերտ. վեր-  
ջինս այն առաւելութիւնն ունի, որ աւելի հեշտութեամբ  
է որոճում և խեղդելու վատանդ չունի: Արմատապտուղ-  
ները չպէտք է մանրել և իրքու պաշար պահել, որով-  
հետև նրանք շուտով են թթւում և բորբոսով ծածկւում,  
որից ոչ միայն անհամանում են, այլ և չափազանց վնա-  
սակար դանում: Ամենից լաւը այն է, մանրացնե-  
լուց յետոյ, իսկոյն թեփի կամ ալրի հետ խառնել, որով  
նրանց շուտ փչանալու առաջը առնելում է և թէ թեփը  
կամ ալիւրը փափկանում:

գ) Արմատապտուղների լանալը գործածութիւնից  
առաջ, մի անհրաժեշտ պայման է: Ճակնդեղը, կարտո-  
ֆելը, բողկը, գաղարը, և այն, եթէ չոր գետնից է հա-  
ւաքւած և այն՝ լաւ եղանակին, բաւականաչափ մաքուր  
են լինում. բայց ուրիշ բան է, երբ թաց հողի միջից

են հահուած կամ անձրեի ժամանակ, երբ կպած հողից կեղտոտել է և լաւ լւանալ է պահանջում:

դ) Հացահատիկների մանրելը կամ աղալը: Որովհեակ վարսակը, գարին, աճարը, ինչպէս և սիսեռը ծածկւած են լինում պինդ և մարսողութեան համար դժւար պատեանով, ուստի դրանց ջարդելը կամ աղալը անհրաժեշտ է: Զին սովորաբար իր կերը լաւ է ծամում, ուրեմն միայն նա կարող է հատիկները ամբողջովին ուտել, ի հարկէ թեփի կամ դարմանի հետ խառն, իսկ տաւարն ու ոչխարը քիչ են ծամում և դժւարութեամբ հատիկները մարսում, հետեաբար հարկաւոր է մանրելով հեշտացնել հատիկները մարսելու գործողութիւնը:

Հատիկների մանրելը օգնում է անասունի շուտ կշամանալուն, թեթեացնում մարսողութիւնը, որով կենդանին շուտ շուտ ուտելու ցանկութիւն է զգում և շատ կեր ընդունելով՝ շուտով դիրանում: Աղած հատիկները աւելի նպատակայարմար են քան ջարդածը.

դ) Հատիկների թրջելը: Հատիկների աղալը կամ ջարդելը կարելի է փոխարինել թրջելով, որովհետեւ հացահատիկները թրջոց դնելուց հեշտութեամբ են մարսում, նրանց պատեանը փափկանում է, ինչպէս սիսեռինը: Բացի դրանից, թրջած հատիկը կարելի է մեծ քանակութեամբ կենդանուն տալ, քան չորը, որ ստամոքսում ուռչելով՝ փորը ուռցնում է, որից ձիերը ծակոցներ են ստանում: Կերի վրայ ջուր շաղ տալը հեշտացնում է թեթև կերի ծանրի հետ խառնելը, ինչպէս ալրաթեփին ու դարուն:

ե) Կերի գոլորշի (բուղ) տալն ու խաւ տալը: Այդ գործողութիւնները կատարւում են մեծ քանակութեամբ դժւարամարս կեր տալիս, ինչպէս հացարոյսերի թեփանքն է ծղօտը կամ ջրջրուկ ու փքացնող բոյսերը, օրինակ, կարտոփելը, որին աւելի անհրարար շինելու համար խառնում

են ծհծած կամ չոր հատիկներ, քուսպ և այլն: Պէտք է գիտենալ, որ այդ ձևով պատրաստւած կերակուրը հնարաւոր է այն տեղերում, ուր վանելիքը աժան է, իսկ ուր այդ յարմարութիւնը չկայ, պէտք է դիմել բնական սանութեան (սիլոսօվանի). այս միջոցով, դարմանը, խոտը, կորնկանը, հացարոյսերի տականքը միքանի վերշոկ հաստութեամբ փուռմ են, ինչքան որ պէտքն է, վրան ալիւր կամ ալրաթեփ ու մանը կարատած ձակնդեղ, կարտոփել շաղ տալիս: Այդ շերտի վրայ քիչ ջուր են սրսկում և աղ շաղ տալիս. յետոյ վրան նոյնպիսի մի շերտ են դնում դարմանից, ալրից, արմատապուղներից, և այդպիսով տաւարի ամբողջ օրւայ բաժինը պատրաստում: Վերջը այդ շերտերը ձեռով կամ եղանով խառնում են, հաւաքում, թումբ դնում և ոտով կոխ տալիս: Այդպէս պատրաստւած կերը երկու օրից սկսում է տաքանալը, նրա մէջ եղած պինդ մասերը փափկել, դուրեկան համուհոտ է առնում և այդ ժամանակ արդէն գործադրութեան համար նա պատրաստ է և տաւարը մեծ ախորժակով է ուտում: Ամբողջ այդ գործողութիւնը պիտի ոչ շատ տաք և ոչ շատ ցուրտ տեղ կատարեի, հակառակ դէպքում, ցուրտ օգը արգելք է լինում. ինքն իրեն տաքանալուն: Այդպիսի կերը չէ կարելի երկար ժամանակ իրեկ պաշար պահել, նա շուտով է փչանում:

զ) Կերի վրայ աղ շաղ տալը: Կեր պատրաստելուն է վերաբերում նաև աղ անելը կամ աղ տալը անասունին: Աղը կերի համը ուղղում է, նրան դիւրամարս է շինում, ծարաւացնում, ջուր խմացնում, որից և կաթը առատանում է:

Կերը փոփխելիս, թոյլ մարսողութեան ժամանակ, ախորժակը տեղը բերելու համար, լաւ է կերակրին աղ խառնելը: Զիերի և տաւարի համար լաւ է աղը խառնել կերի հետ կամ թէ չոր կերի վրայ հարկաւոր քանակու-

թեամբ աղաջուր ածել, ոչխարներին աղաքարը տալիս են լիզելու, տաւարին ու ձիերին մի անգամից կարելի է առ 2—3 լոտ կամ 6—9 զոլոտնիկ:

### ԶԱՆԱԳԱՆ ԿԵՐԵՐԻ ԽԱՌՆՈՒԻՐԴՅԸ:

Զանագան կերերի արժանաւորութիւնը կարելի է բարձրացնել թէ նրանց ինսամքով պատրաստելով և թէ իրար հետ խառնելով, որովհետեւ կերի միքանի տեսակները այնպիսի արժանաւորութիւն ունին, որ միւսների մէջ բացակայում է: Առաւ մննդարար մասեր ունեցողները պէտք է պակաս ոննդարարների հետ, խառնել, չորեր՝ թացի կամ աւելի հիվանդի կերի հետ և այն: Վերջապէս խառնուրդի մէջ կարելի է մացնել և այնպիսի կեր, որ ըստինքեան կենդանիներին չէ տրում, ինչպէս օպեհանութեան մնացորդները, քուսպը, և այլն. միայն որպէսզի զանագան տեսակ կերերի խառնուրդով նրանց արժանաւորութիւնը բարձրանայ, անհրաժեշտ է հիմնաւորապէս ծանօթութիւն ունենալ նրանց յատկութեանց հետ, այն է, թէ որքան նրանք դիւրամարս կամ դժւարամարս են, աննդարար կամ քիչ մննդարար, պինդ են, թէ կակուղ, չոր թէ փափուկ կամ ջրջրոտ, որքան են նրանք համապատասխանում այս ու այն անսասունին և այս ու այն նպաստակին, ինչպէս և այն, թէ ինչ կերերի հետ խառն կարելի է նրանց տալ:

Այդ նպատակով այստեղ մէջ կբերենք անսասունների համար ամենուրեք գործադրուող կերերի և գիւղատնտեսական բոյսերի նկարագրութիւնը:

Ամենից բնական կերը բոլոր անսասունների համար, որոնք մննդում են բոյսերով, սրանք են.

1) Կանաչ կերը, որի մէջ առաջին տեղը բոնում են խոտերը.

ա) Վարզերի (լոցօայ) խոտը, Այն մարգերը, որոնք

աչքաթող են արւած, չափազանց խոնաւ կամ ջրոտ են և մամուռով ծածկւած, շատ քիչ սննդարար տեսակի բոյսեր են տալիս, և այն յաճախ անասնի առողջութեան վնասարեր: Իսկ ինսամքով պահպանւած մարգերը, որոնք ջրառուներ ունին, ամեն տարի գարնանը փոցխւում են և խոտի լաւ տեսակներ ցանւում վրան, ընտիր կեր են տալիս: Եղանակը, լոյսը, ջերմութիւնը և չափաւոր խոնաւութիւնը շատ օգտակար ազգեցութիւն ունին խոտի լաւութեան և աճելութեան վրայ, ուստի և ամենամնդարար և համեղ խոտերը տաելի սարերում են աճում, քան դաշտավայրերում կամ ցած տափարակներում: Եւ լերանց այն փեշերինն է նախապատիւ, որոնք նայում են դէպի արևելահարաւ, քան հիւսիս և արևմտեան կողմերը: Թթու, ցուրտ և ճահճուտ հողերի խոտը լինում է թթու, անհամ, քիչ մննդարար և նա եթէ հարկադրւած տրում է անսասնին, առանց վնասի չի անցնում: Ամենամեծ վնասը տալիս է տաւարին ու ոչխարին, մանաւանդ հորթերին ու գառներին: Խիտ անտառում բուսած ամենալաւ խոտերն էլ, թէ արևի լոյսի պակասութեան և թէ օդի քիչ թափանցելու պատճառով կորցնում են իրենց ընտիր յատկութիւնները և այլասեռում:

Խոտերի արժանաւորութիւնը, նայելով թէ ինչ պայմանների մէջ է աճել և կամ երբ հնձւել, նոյնպէս զանազան է: Մատաղ բոյսերը ծաղկելուց առաջ աւելի քնքոյշ, աւելի մննդարար, աւելի շուտ մարսւող են, քան ծաղկած ու ծաղիկը թափւելուց առաջ, երբ ցողունը ամրանում է, շատ մասերը փայտանում և բոյսը անհամանում է ու կորցնում մննդարար մասերից շատը և դժւարամարս գառնում: Մարգի լաւ խոտը, ինչպէս կանաչ կեր, տաւարի ու ոչխարի համար բաւարար է և նրանց բոլոր կարիքներին կարող է գոհացնել, միայն ձիերի համար, եթէ դրանք աշխատում են, չէ կարելի

բաւարար համարել։ Ամառը միմիայն մարդի կանաչ խոտով ապրող քուռակները տեսքով լաւ են թւում, բայց մեծ քանակութեամբ այդ կերը սպառելով, իրենց նուրը կազմը կորցնում են և վերջը անընդունակ դառնում արագ ու թեթև ընթացք ունենալու։ Մարդի խոտերի մէջ լաւերը համարւում են խրացակը (կոստեր), տիմօֆէկեան, չայերը, աղլէսագին (լուսակացածը) գաշտախոտը (մյալիկ), որոմնախոտը (րեյգրած), վայրի գարին, նապաստակի վարսակը, և այլն։ Միջակ են հաշւում վայրի վարսակը, մեղրախոտը և ուրիշներ, իսկ վատ խոտեզի կարգին են պատկանում նրանք, որոնք անասնի առողջութեան շատ անգամ վնասում են, այն թթու խոտերը, որոնք բուսնում են խոնաւ ու ճահճային տեղերում, այն է՝ գետնալեզին (զօլոտոտափնիկ), բոշը (օսոկա) և շատ ուրիշներ։

բ.) Կարմիր ու ներմակ երեխուկը (սիրիսիրին, ռլե-  
վեր) կանաչ կերերի մէջ առաջին տեղն է բոնում, մա-  
նաւանդ եթէ նա խառն է լաւ տեսակի խոտերի հետ։

Միմիայն իբրև կանաչ կեր ուտացնելով, նա տաւարի և ոչխարի փորը սաստիկ ուռեցնում է, բայց խառն որոմնա-  
խոտի և ուրիշների հետ, այնքան վտանգաւոր չէ։ Թէ ծաղ-  
կելուց առաջ կերցրած, թէ անձրկից ու ցողից թրջւած  
երեքնուկը սաստիկ փքացնում է, ճնձած ու քիչ թումածը  
տւելի քիչ է փքացնում։

գ.) Առւոյտը (եօնջան), ինչպէս կանաչ կեր, երեք-  
նուկի պէս նոյն սննդարար յատկութիւնն ունի, բայց  
այնպէս չի փքացնում, ինչպէս նա։ Ամեն տեսակ կանաչ  
կեր, որոշ զգուշութիւններ բանեցնելով, որոնց մասին  
ստորև կխօսենք, կարելի է անվնաս դարձնել թէ տաւարի  
և թէ ոչխարի համար։

դ.) Էսպարցէտը թէ տաւարի, թէ ձիերի և թէ  
ոչխարի համար ընտիր կանաչ կերակուր է, փքացնում է

միայն մատաղ ժամանակը, բայց երբ սկսում է արդէն ծաղկել, առանց երկիւղի կարելի է ճնձելուց անմիջապէս ուտացնել։

ե.) Սիսեռը եւ մաըր, մանաւանդ վարսակի և գարու հետ ցանւած, ընափիր կանաչ կեր է։ Ծաղկած ժամանակ թէ պակաս մննդարար է, քան մատաղ միջոցին, բայց կարելի է ուտացնել առանց երկիւղ սւնենալու փքութիւնից։

զ) Եզիպտացուենը (խամբարը, սմինդը, դարդուդալի) թէ հասարակը և թէ ձիատամ ասւածը, կանաչ ժամանակ, երբ ճնձում են, անասունների սիրելի կերն է։ Նբանք հիւթալի ու քաղցը լինելով, նպաստում են առատ կաթ տալուն և, բացի դրանից, կաթը աւելի ախորժահամ շինելուն։ Եզիպտացուենը փքութիւն չի պատճառում, բայց գրանով երկար կերակրելիս, առանց ուրիշ կերի, փորլուծութիւն է առաջ բերում։ Դարմանի հետ մեծ-մեծ կտորած՝ տաւարը մեծ ախորժակով է ուտում։

**ԿԱՆԱՉ ԿԵՐ ՈՒՏԱՑՆԵԼԻ ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ.**

Որպէսզի անասունները գոմում կամ մարգում կանաչ կեր ուտելիս փքութիւնից ազատ մնան, պէտք են հետեւ նախազգուշութիւնները։

Կանաչ կերը, մանաւանդ երեքնուկը, պէտք է ճնձել արել ծաղելուց յետոյ, երբ ցողը կանցնի, կամ արել մայր մանելուց առաջ, մինչդեռ ցող չէ նստել, և խոկոյն դաշտից տանել ու փոել քամհար ու մութ տեղ։ Զպէտք է անձրկից անմիջապէս յետոյ ճնձել, մինչև չցամաքի։ Նոյնպէս չպէտք է անասուններին արօտ քշել, քանի որ նա անձրկից թրջւած է կամ վրան ցող դրած, մանաւանդ երեքնուկի կամ առւոյտի մէջ բաց թողնել։ Եթէ ստիպւած են թաց կանաչ կեր տար, պէտք է նրա հետ քիչ չոր խոտ կամ դարման խառնել։

Կանաչ կերը ուղղակի կարելի է բերել դաշտից և այնպէս ուստացնել. մեծ քանակութեամբ թմբակներ (լիւքիւթներ) գրածը, թառամածը, երբ արդէն սկսել է տաքանալ, թէ ոչխարների, թէ առարի համար վասակար է:

Զպէտք է մատաղ երեքնուկը առանձին տալ, այլ չոր խոտի կամ դարմանի հետ խառնած, ամեն 100 ֆունտին 3 ֆունտ դարման հաշւած:

Զպէտք է ցեխոտ ու տղմոտ կանաչ կեր ուստացնել, իսկ եթէ ստիպւած ենք այդ անելու, ուրիշ կեր չունենաւուզ ձեռքի տակ, այն ժամանակ պիտի ջրում լւանալ, շւաք և քամհար տեղ փոել, չորացնել և ապա տալ, բայց ոչ մեծ քանակութեամբ, և այն դարմանի հետ խառն:

Զպէտք է մի անգամից կանաչ կերը մեծ քանակութեամբ տալ, մանաւանդ քաղցած անասուններին, և այն առաւօտեան անսւաղ (անօթի, գեռ ուրիշ բան չկերած), որովհետև տաւարն ու ոչխարը կանաչ կեր տեսնելիս ազահութեամբ են ուտում, առանց խնամքով ծամելու, որով այդպիսի կերակրի մեծ մասը կամ ամբողջովին ընկնելով առաջին ստամոքսը, նրա ջերմութեան ու ստամոքսի թուլութեան շնորհիւ, սկսում է սաստիկ խմորւել (եփ գալ), որից շատ գաղեր են առաջանում, փորը արտաքոյ կարգի փրւում, թոքերը սեղմում և խեղդում է անասնին:

Զպէտք է կանաչ կեր տալուց յետոյ իսկոյն անասուններին ջուր տալ. աւելի լաւ է ջուր տալ այդպիսի կեր տալուց առաջ:

Այդ նախազգուշութիւնները պահպանելով՝ փքուսոյցից էլ վախենալու հարկ չկայ, բայց եթէ այդպիսի բան պատահի, իսկոյն այս միջոցներից մէկն ու մէկը պիտի դորձագրել:

Մի գդալ պոտաշ հալեցնել երկու շիշ ջրի մէջ և երկու նւազում խմացնել:

Կէս բաժակ օղի խառնել մի շիշ ջրի հետ և խմացնել անասնին:

Զախ կողմի փքւած փորատակը ձեռքով կամաց ձնշել, իսկ փորին անդադար ցուրտ ջուր ածել և սկիպիդարով պինդ տրորել:

### ԶՈՐ ԽՈՏՀ:

Զոր խոտը կորցնում է իր ջրի մեծ մասը և փոքր չափով սննդարար մասերը: Այդ կորուստը աւելի է մեծանում, որքան հնձած խոտը աւելի է մնում անձրիի, ցողի և արկի տակ: Խոտը չորացնելով, նրա արժանաւորութիւնն էլ բարձրանում է, այնպէս որ կանաչ խոտի 4 ֆունտին մի ֆունտ չոր է փոխարինում:

Ամենալաւ, առողջարար խոտը մանր, բարակ, լեռնային ու չոր տեղի մարգերինն է, որը շատ հոտաւէտ խոտեր է ունենում մէջը: Այդպիսի խոտը շատ սննդարար է, թէ անասնի առողջութեան վրայ լաւ է ներգործում, թէ կաթը համով է և թէ նպաստում է փոքրերի զարգացման:

Քիչ թաց կամ ջուր կոխող մարգերի խոտը քիչ սննդարար արժանաւորութիւն ունի, միայն անասնի առողջութեանը չէ վաստում: Խոշոր, բոշխոտ (սիրիմոտ, օՏՈՐԵՎՕԾ) միշտ թաց ու թթւած մարգերի խոտը թէ շատ անհան սննդարար նիւթ ունի մէջը և թէ շատ անգամ վաստում է կենդանու առողջութեան իր մէջ զանազան պարագիւների սաղմեր ունենալով, որոնք այդպիսի խոտի հետ ուտելով, անասնի մարմնի մէջ զարգանում են և նրան թէ մաշեցնում և թէ ուժասպառ են անում:

Անտառի խոտը, մանաւանդ մութ տեղերինը, վատ խոտերի տեսակին է պատկանում:

Հին խոտը, այն՝ որ մի տարուց աւել է ընկած, հետըգհետէ կորցնում է իր կանաչ գոյնը, համը, հոտը և սնը:

դարարութիւնը, վշրող է գառնում, որից նրա քնքոյշ, աւելի սննդարար մասերը թափուում են:

Խոտը դէզի մէջ հեշտութեամբ է տաքանում, քրանում, կորցնում հոտը և կծուում: Երկար ժամանակ անձրեկ տակ մնացած խոտը կորցնում է թէ կանաչ գոյնը և թէ նւազում սննդարարութիւնը: Վերջապէս յորդ անձրեներից կամ գետի մեծանալուց տղմով կեղտուուած խոտը շատ վնասակար է ձիերին, նրանց մէջ տիֆ, արիւնամիզութիւն և այլ հիւանդութիւններ է առաջ բերում:

Եթէ լաւ կեր չունենալուց ստիպւած ենք անսասուններին տղմոտ կամ վատ յատկութեամբ չոր խոտ տալ, աւելի լաւ է այդպիսին տաւարին ուտացնել, որը նրա տւած վնասներին աւելի դիմացկուն է քան ձին: Գործադրելուց առաջ, այդպիսի խոտը պէտք է թափ տալ, քամու տալ, ապա աղաջրի մէջ թաթախել, կտրատել, դարմանի կամ քուսպի հետ խառն ուտացնել:

Չոր խոտը ձիերի համար ծառայում է ինչպէս մի յաւելւած աւելի սննդարար հատիկաւոր կերի. իսկ տաւարի ու ոչխարի համար ընդհակառակը ծառայում է, աւելի նւազ սննդարար թաց կերի պակասը լրացնող:

Խոտի լաւ տեսակներից մինն էլ համարւում է աճնան խոտը, լաւ մարգերից հաւաքւած և ծածկոցի տակ պահւած: Աշնան խոտը, որ քնքոյշ խոտերից է բաղկացած, հեշտութեամբ է խոնաւութիւն քաշում, բայց դժւարութեամբ չորանում, դրա համար էլ անձրեկց շուտ է փչանում, չորանալուց հեշտ է փշրուում և թափ տալուց ամենասննդար մասերը կորցնում:

Հաւաքելիս՝ նամ խոտը հեշտ է փչանում, քան առաջին հնձից հաւաքածը և աւելի շուտով բորբոսով ծածկում:

Երեքնուկի չոր խոտի ամենալաւը այն է, որը հըն-

ձւած է առաջին ծաղիկների գլուխը երկալուց, և որքան նա այդ ժամանակից ուշ հաւաքւի, այնքան նրա արժանաւորութիւնը կպակասի:

Երեքնուկի չոր խոտը անձրեկ տակ մնալուց հասարակ մարգի խոտից աւելի է կորցնում իր սննդարարութիւնը, իսկ չորացնելուց՝ հեշտ է փշրուում, այնպէս որ շարժելուց կամ տեղափոխելուց տերեների ու ծաղիկների մեծ մասը, որ բոյսի ամենասննդարար ու ընտիր մասն է, կորցնում է:

Երեքնուկի չոր խոտը չէ կարող մարգի խոտին բոլորովին փոխարինել, և եթէ միմիայն դրանով ձիերին կերակրենք, նրանց մարսողութիւնը կթուլանայ և այս ու այն հիւանդութեան տրամադրի կամէ:

Սիսեռի, մաօի և ոլոնի խոտը շատ սննդարար է, բայց արիւնը շատացնող է, դրա համար էլ առատօրէն չէ կարելի կերակրել: Նա շատ դժւարութեամբ է չորանում, հեշտ փչանում և շատ անգամ դեռ չննձւած, բորբոսով ծածկում: Որպէսզի սիսեռն ու մաշը տափին նստելուց չփչանան, պէտք է խոտեղէն բոյսերի հետ ցանել, ինչպէս վարսակի, գարու կամ որոմի (բեյգրած) հետ:

Ոլոնի խոտը երեքնուկի պէս համարեա թէ սննդարար է, ձիերի համար լաւ կեր է, բայց ոչխարներին ոչ այնքան, երկար ժամանակ դրանով կերակրելուց կարող է դանդաղեցնել բրդի աճումը:

Առոյցի (եօնջայի) և էսպարցեսի խոտը ժամանակին հաւաքած, նոյն արժանաւորութիւնն ունի, ինչ որ մարգի խոտը: Եթէ ձին միայն որ և է չոր խոտով պէտք է կերակրւի, այն ժամանակ դրանից կարելի է տալ մինչև կշտանալը, իսկ եթէ գարի կամ վարսակ է տրւում ձիուն, այն ժամանակ մեծ ձիու համար օրական 15 գունա առւոյտը բաւական է:

ԾՂՕՏՀ ԿԱՄ ԴԱՐՄԱՆԲ:

Դարմանը կասես թէ բնութիւնից սահմանւած է այն անասունների համար, որոնք պէտք ունեն քիչ սննդարար, բայց մեծ քանակութեամբ կերակրի. հետեաբար նա աւելի բնական է տաւարին ու ոչխարին, քան մի այլ անասնի:

Հացաբոյսերի ծղօտը կամ դարմանը շատ գժւարամարս է, ուստի նախապէս նրան պէտք է պատրաստել և մի որ և է ջրջրոտ կերի հետ խառն ուտացնել, օրինակ արմատապուղների, քուսպի, ճակնդեղի, և այլն... Որքան ծղօտը շատ տեսակ տեսակ խոտեր ունենայ մէջը, այնքան նա սննդարար է: Չոր տարին աւելի սննդարար է, քան թոռութաց, որովհետև չոր ժամանակը արմատները հողի մէջ աւելի խոր են մտնում և աւելի սննդարար հիւթեր ծծում, բոյսը շուտ է աճում, սերմը իր բաժինը վերցնելուց յետոյ, շատ մասն էլ մնում է ծղօտի մէջ: Երբ հունձը լաւ եղանակին է կատարւում, ծղօտն էլ լաւ է լինում: Չոր ու լեռնային տեղերի ծղօտը աւելի լաւ է, քան թաց ու թթւած հողերի: Ծղօտը երբ երկար ժամանակ մնում է, կորցնում է իր արժանաւորութիւնը, դրանից էլ աշնանը նա աւելի լաւ է, քան դարնանը: Հոտած ու պառաւած ծղօտը առաջացնում է փորլուծութիւն և գժւարամարսութիւն և ուրիշ հիւնանդութիւններ:

Ամենաշատ սննդարար նիւթ ունի սիսեռի և մաշի ծղօտը, որովհետև սիսեռի բոյսը միաժամանակ չի հասունանում և ծղօտը իր մէջ զեռ ժեժ մասեր էլ է ունենում. բայց ձիերը դրանով կերակւելով ծակուց կամ փռուոյց են ստանում:

Վարսակի ու զարու ծղօտը աւելի լաւ է, քան աճարինն ու ցորենինը. վերջինս դարնանը, երբ արտի միջից հանում ենք ալաղը, տալիս է մաքուր ծղօտ, բայց շատ քիչ սննդարար:

Բայց որչափ էլ դարմանը ընտիր լինի, այնուամենայինիւ չի կարելի լոկ նրանով կերակրել տաւարն ու ոչխարը. անշուշտ պէտք է մի ուրիշ աւելի սննդարար կերի հետ խառնել. Մսուրների մէջ ծղօտ շատ պիտի թափել, որ անասունները միջից կարենան լաւերի ընտրութիւն անել: Տականքը պէտք է աղբի վրայ ածել:

Գոնզեղի (րապչ) պատիճները (սերմատունը) արժանաւորութեամբ հաւասար են լաւ ծղօտի, բայց պէտք է ծեծելուց անմիջապէս յետոյ ուտացնել, որովհետև շուտով է բորբոքնում և անասնի առողջութեան վասում:

Բոլոր տեսակ հացաբոյսերի յարդի մղեղը (մյակիա) իր սննդարարութեամբ աւելի բարձր է ծղօտից, բայց այդ չպէտք է ձիերին ուտացնել, որովհետև բաւականին փոշի ունի մէջը, որը վասում է նրանց. միայն տաւարին և խոզերին կարելի է տալ նախապէս կարտոֆելի կամ ճակնդեղի հետ պատրաստած: Մղեղի ամենասննդարարը համարւում է ցորենինը. վարսակինը երկրորդ տեղն է բռնում:

ԱՐՄԱՏԱՊՑՈՒԽ, ԲՈՅՑՍԵՐԸ:

Կարտոֆելը ընտիր կեր է տաւարի և խոզերէ համար, իսկ ձիերի և ոչխարների համար ոչ այնքան: Մննդարարութեան կողմից շունտ կարտոֆելը հաւասար է մի փունտ չոր խոտին:

Կարտոֆելը միշտ դրւում է կենդանիներին թէ հում և թէ եփած, միշտ խառն չոր կերի հետ: Ի՞նչն իրեն միայնակ նա չէ կարող տաւարի համար կեր լինել:

Կարտոֆելը որոշ ժամանակ մնալով, իր ջրի մի մասը կորցնելով, աւելի սննդարար է դառնում, քան նոր քանդած հանածը, միայն այս կայ, որ դարնանը, երբ սկսում է ծլել, նորից իր սննդարարութիւնը քչանում է: Եփած կարտոֆելը նախընտրելի է, քան հումը: Զիերը

մեծ ախորժակով են ուստում եփածը և վարսակով կերակրելիս, կարելի է մեծ քանակութեամբ տալ: Հում կարտոֆելը դժւարութեամբ են մարսում ձիերը: Ծանր աշխատանքի ժամանակ ձիերին չպէտք է կարտոֆելով և մանաւանդ հում կարտոֆելով կերակրել, որովհետեւ մեծ քանակութեամբ ջրային կերը առատ քրախնք է առաջ բերում, որից և թուլանում են ու հիւանդանում մրսելուց:

Ինչ վերաբերում է տաւարը կարտոֆելով կերակրելուն, եթէ նա դարմանի (յարդ) հետ խառն է տրուում, մանաւանդ եփածը, ընտիր կեր է նրանց համար, թէ առատ կաթ են տալիս, և թէ շուտով չաղանում:

Խոզերին միմիայն եփած կարտոֆել պիտի տալ, և այն մանրած ու վրան փոքր քանակութեամբ ալրաթեփ կամ ալիւր խառնած, այդ կերակուրը նրանց գիրացնելուն ևս նպաստում է:

Հում կամ լաւ չեփած ու կանոնաւոր չպատրաստւած կարտոֆելը հեշտութեամբ կարող է խոզերին խեղզամահ պատճառել, որովհետեւ խոզերի որկորը նեղ է և ամեն տեսակ կեր ագահութեամբ են լափում:

Կարտոֆելով կերակրելիս պէտք է հետեւեալ նախազգուշութիւնները բանեցնել. 1) Եփելուց ու պատրաստելուց իսկոյն ուտացնել, որովհետեւ նա շուտով է թթւում և շրէց դառնում. 2) Կարտոֆել ուտացնելուց յետոյ, իսկոյն ջուր չտալ. 3) Լաւ լւանալ և դարնանը ծիլերը պոկել, որովհետեւ այդ ծիլերի մէջ բաւականաչափ աղարքու (солյանին) ասւած թունաւոր նիւթը կայ, որը անասունների համար շատ վնասակար է: Այդ հիւթին են վերաբրում գարնանը տաւարի հորթատելը և թէ ոչխարի վիժումը: 4) Ցուրտը տարած և թէ փթած կարտոֆել չուտացնել, որը ոչ միայն շատ հիւանդութիւնների պատճառ է դառնում, այլ և վնասակար ներգործութիւն է ունենում կաթի թէ քանակի և թէ համի վրայ. 5) Հում կար-

տոփել տալիս, պէտք է մանր կտրատել, դարմանի հետ խառնել, վրան աղ շաղ տալ և կամ 12 ժամ ջրի մէջ թրջոց դնել, որից նա իր միջի շատ սուր հիւթերը կորցնում է և գործածութեան համար պիտանի դառնում. 6) Վերջապէս կարտոֆելով կերակրելիս, անասնին քիչ քիչ պիտի վարժեցնել.

Օրւայ բաժինը տաւարի համար 40—60 ֆունտ է, իսկ ձիերի և ոչխարների համար նա միմիայն իբրև յաւելեալ կեր պիտի ծառայէ, չոր կերի հետ խառն, ուստի և շատ փոքր չափով պիտի տալ:

Ճակնդեղը այնքան սննդարար կեր չէ անասունների համար, ինչպէս կարտոֆելը, բայց աւելի առողջարար է և դիւրամարս: Նրա մէջ եղած առատ ջրային մասերը հեշտութեամբ կարելի է հեռացնել համապատասխան չափով չոր կեր աւելացնելով:

Զիերի համար նա համապատասխան կեր չէ քիչ մննդարարութեան կողմից. նա թէ փքութիւն և թէ ծակոց է առաջ բերում: Բնդհակառակն տաւարի ու ոչխարի համար ընտիր կեր է, մանաւանդ նա լաւ է ներգործում կովերի թէ առատ և թէ ընտիր կաթ տալու վրայ, և այդ բանի մէջ նա կարտոֆելից նախապատիւ է համարւում, միայն նա գիրացնելու տեսակէտից կարտոֆելի տեղը չէ բռնում:

Գազարը շատ քիչ սննդարար է. տաւարը, ոչխարը և մինչեւ անգամ ձիերը նրա քաղցր համի համար ախորժակով են ուտում: Կաթին նա թարմ ու գուրեկան համ է տալիս, բայց կիթը առատացնելու վրայ չէ ներգործում: Զիերին չպէտք է մեծ քանակութեամբ գազար ուտացնել, որովհետեւ նրանց փորն ու ոցնում է, փորլուծութիւն ու ծակոց առաջ բերում: Բանւոր ձիերը գազարով առատ կերակրելիս՝ կորցնում են իրենց ոյժը, նիհարանում են, միայն չափաւոր բաժին տալիս, օգնում

է նրանց թռքային գումին (կատար) և այլ հիւանդութիւններին:

Գոնզեղը (օրիուս, ճակնդեղի տեսակ) և շաղգամը (քնար) արժանաւորութեամբ կարտոֆելից, ճակնդեղից ու գաղարից ստոր են թէ մննդարարութեան և թէ անասունների առողջապահութեան տեսակէտից, դրանք կաթին անհաճոյ համ ու հոտ են տալիս:

Կաղամբի թերը, եթէ վնասւած չէ, տաւարը ախորժակով է ուսում: Կծւածը ու փտածը վնասում են, զանազան հիւանդութիւններ առաջ բերելով: Իսկ կաղամբի կոթերը կարելի է տալ, միմիայն մանը կտրատելուց յետոյ, որովհետեւ նրանք շատ պինդ են և կարող են խեղդել անասնին:

Կարտոֆելի բուփը գեռ կանաչ ժամանակ բաւական մննդարար կեր է, բայց թարմութիւնը կորցնելուց յետոյ, տհաս կարտոֆելի պէս փորլուծութիւն և ծակուց է աւաջ բերում, դրա համար էլ ինչպէս կեր չէ գործադրում: Մանաւանդ վնասակար է թուփը, ծաղիկը թափւելուց յետոյ, երբ սերմակալում է:

Ճակնդեղի թերը շատ ջրջրի է և ճակնդեղից նւազ մննդարար. թարմ, կանաչ տերենները առանց երկիւղի կարելի է տաւարին տալ:

### ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ:

Ալրաղացների, օղու, շաքարի և ձիթհան գործարանների տականքը, ինչպէս թեփը, քուսպը, ճակնդեղի մզւածքը, ճաճան կամ չենչը իբրև յաւելւած կեր կարող են ծառայել ընտանի կենդանիների համար որոշ նախաղգութիւններ բանեցնելով:

Անարի թեփը ամենալաւն է համարւում, որովհետեւ շատ ալիւր է ունենում մէջը. ամենից քիչ մննդարար համարւում է ցորենի թեփը: Առհասարակ թեփերը իրենց

դժւարամարսութեան տեսակէտից գոհացուցիչ կեր չեն կազմում: Բանւոր ձիերը դրանից սաստիկ քրանում են և երկար կերակրելուց՝ թուլանում է մարսողութիւնը: Դրա համար էլ անասուններին թէ փոքր չափով պիտի տալ և այն՝ ուրիշ կերակրի հետ, և թէ միջոց տալով:

Քուսպը (յամակա) լաւ և շատ մննդարար կեր է, մանաւանդ կաթնատու կովերի և գիրացնելիք տաւարի համար. բայց միշտ պէտք է ուրիշ քիչ սննդարար կերի հետ խառն տալ: Ոչխարների համար էլ նրանք շատ օգտակար են, թէ բրդի և թէ մսացւի տեսակէտից, մանաւանդ կաղգուրիչ է ծծմայր ոչխարներին: Քուսպով գլխաւորապէս սննդւող խոզերը լաւ գիրանում են, միայն նրանց ճարպը շատ կակուղ է դառնում և հալկան, իսկ միսը անախորժ համ բռնում: Որպէսզի այդ չպատահի, խոզերին պէտք չէ առատօրէն դրանով կերակրել, իսկ մորթելուց երկու շաբաթ առաջ բոլորպին դադարեցնել: Չիերին քուսպ ուտացնում են միմիայն իբրև ճար, երբ երկար հիւանդութիւնից շատ թուլացած են լինում, երբ գարնանը մազը (թիւքը) վար է տալիս և այն ժամանակ, երբ փորկապութիւն ունի և դուրս գնալ չէ կարողանում: Այդ դէպքում նախընտրելի է կտաւատի քուսպը:

Քուսպը թէկ գիւրամարս ու մննդարար կեր է ներկայացնում, սակայն երկար ժամանակ նրանով կերակրելով, թուլացնում է անասունների մարսողութիւնը, փորւծութիւնը զարգացնում և փորի ճիճուները շատացնում:

Քուսպով կերակրելիս հետեւեալ նախազգուշութիւնները պիտի բանեցնել. պէտք է քուսպը մանը ծեծել, ջուր խառնել և պատրաստելուց անմիջապէս տալ ինչպէս լակ, դարմանը նրանով թրջել, ուտացնել: Քուսպի վրայ անպատճառ պիտի աղ անել:

Կտաւատի, կանեփի և խաշխաշի քուսպը ընտրելի է, քան գոնզեղի (բացէ) և շաղամի (քնար), որովհետեւ սրանք

սաստիկ գրգռում են ստամքսը և աղիքները, թէ բորբուժն առաջ բերում և թէ սաստիկ լուծ, միայն այդպիսի քուսպերի վասակարութիւնը կարելի է մեղմել, եթէ եռացող ջրի գոլորշիներում պահենք:

Քուսպը կովերին կարելի է տալ օրական մինչև  $\frac{2}{3}$  ժունատ, և ոչ աւելի:

Տականիլ կամ ձեմը նայելով, թէ ինչ նիւթից է ստացւած, տարբեր տարբեր սննդարար արժանաւորութիւն ունի: Եթէ օղեհանութեան նիւթը լաւն է, տականքն ևս լաւ է լինում: Ամենալաւ և ամենից սննդարար տականքը համարում է հացաբոյսերի հատիկների օղեհանութեան տականքը, այն է ցորենի, աճարի, գարու և եղիպտացորենի: Ամենից քիչ սննդարար է կարտոֆելի տականքը: Օղեհանութեան լաւ տականքը առհասարակ լաւ սննդարար կեր է: Նա նպաստում է ճարպի շատանալուն, քան ուժին: Փտած կարտոֆելի տականքը վասակար է, իսկ ծիլերից զգուշութեամբ չմաքրւածը աղաթթու ասւած թունաւոր նիւթն ունի մէջը: Տականքով առատ կեր տալը վասառում է անասուններին, տաւարը խոնաւախու է ստանում, որին մանաւանդ նպաստում է նրանց տակը ծղօտ չփոելը և զոմանոցի կեղաստ պահելը: Երբ անասունը յանկարծ շատ տականք է ուտում, գրանից կարող է փութիւն ստանալ և յաճախ կրկնել: Տականքով ու չոր կերակրով առատ կերակրւած տաւարի միսը շատ համեղ է, իսկ միմիայն տականքով ու շատ քիչ գարմանով գիրացրած տաւարինը թոյլ է, անհամ, իսկ ճարպը՝ կակուղ և պաղպաղակի նման (студенистый):

Տականքով կերակրւած կովերը շատ քիչ սերուցք ունեն: Տականքով կերակրելիս պէտք է հետևեալ նախազգուշութիւնները բանեցնել. ա) տականքը պէտք է իբրև յաւելեալ կեր լինի չոր կերակրի, ինչպէս դարմանի, դարմանաթեփի, ևայլն. բ) երբ նկատի ունենք տական-

քով մեծ քանակութեամբ կերակրելու, անասնին հետըգնատէ պէտք է վարժեցնել դրան. գ) տականքը միայն թարմ պէտք է տալ, և ոչ թթւած. ե) տաշտերը, մառըները և առհասարակ բոլոր ամանները շատ մաքուր պահել և գոնէ շաբաթը մի անգամ լւանալ կըաջրով. զ) տականքին ջուր չպիտի խառնել, որովհետև առանց դրան էլ նա ջրալի է. է) տականքը ինչպէս լակ կարելի է տալ միայն ցըտացրած. տաքը վասակար է. ը) փտած, ցուրտը տարած կամ ծլած կարտոֆելի տականք ամեննին գործ չածել. թ) ծանրացած էգերին քիչ չափով տականք տալ և այն՝ չոր կերի հետ:

Ինչ վերաբերում է նրա քանակին կամ չափին, նա պէտք է օրւայ տալիք կերակրի մի երրորդ մասից աւելի լինի:

Տաւարին տալիս են օրական ոչ աւելի, քան վեց վեղրօ, ձիերին, ոչխարներին և խոզերին այնքան, որքան հարկաւոր է չոր կերը փափկացնելու համար:

Շաբարգործարանների նակնդեղի տականիլ թարմ ժամանակը տաւարի համար վատ կեր չէ, բայց միշտ պէտք է չոր կերի իբրև յաւելեալ բաժին տալ, ինչպէս դարմանի կամ խոտի, իսկ գիրացնելիք տաւարին—հացահատիկների, թեփի կամ քուսպի հետ տալ: Ճակնդեղի տականքով կերակրելիս, մառըները շատ մաքուր պիտի պահել: Չոր կերի ժամանակ, ճակնդեղի օրական բաժինը տաւարի համար կարող է հասնել մինչև 100 ֆունտի, միւս անասուններին քիչ պիտի տալ, և այն՝ իբրև յաւելեալ կեր:

### ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐ:

Հացահատիկներն են ցորենը, աճարը, գարին, վարսակը և եղիպտացորենը (խամբարը, սմինդը):

Տաւարի, ոչխարի և խոզերի համար դրանք կազմում են իրեւ յաւելեալ կեր աւելի պակաս մննդարար կերի և այն՝ նախապէս այս կամ այն ձևով պատրաստելու ու մեծ քանակութեամբ<sup>1)</sup> , թէ իսոշոր աղածը աւելի օգտակար է նրանց համար:

Հացահատիկներով, և այն առանց աղալու, տաւարին և խոզերին կերակրելիս, դրանք մեծ մասամբ անմարս են մնում և իրենց աղբի հետ ողջ ողջ դուրս գալիս: Անասունների համար ամենից սննդարար, բայց իրենց թանկութեան պատճառով քիչ զործագրուղ հացահատիկներն են ցորենը և աճարը, ապա վարսակը, եղիպտացորենը և դարին:

### ՊԱՏԻՃԱԿԻՈՐ ՀԱՏԻԿՆԵՐ:

Պատիճաւոր հատիկներն են սիսեռը, մաշը, լոբին, ոլոռնը: Ինչ որ ասւած է հացահատիկների մասին, նոյնը կարելի է վերագրել և պատիճաւոր հատիկներին: Դրանց կարելի է գործագրել բոլոր անասունների համար, միայն իրեւ յաւելեալ կեր աւելի նւազ սննդարար կերի, նախապէս պատրաստած, ծեծած, աղած, թրջոց դրած կամ եփած:

Սիսեռն էլ ցորենի պէս սննդարար է, բայց շատ դըժւարամարս լինելով, զրգում է ստամոքսը. մաշն ու լոբին աղած կարելի է ձիերին ուտացնել վարսակի փոխարէն, միայն նրա կէս չափով:

Ոլոռնի հատիկները սննդարար նիւթերով շատ հարուստ են: Ոլոռնը աւազային հողերում լաւ է աճում և առատ հունձ տալիս, դրա համար էլ աւազային տեղերում նրա մշակութիւնը աւելի է ընդունւած:

Այդ աժան և ընտիր կերը քիչ տարածւած լինելու գլխաւոր պատճառը այն է, որ ոլոռնի դառնութեան համար

<sup>1)</sup> Բացի գարուց և եղիպտացորենից, ոլոռնք պէտք է աղած տալ:

անսովոր անասունները սկզբում չեն ուզում ուտել: Նրա դառնութիւնը շատ պակասում է, երբ ջարդած ոլոռնը 24. ժամ մնում է թրջոց դրած: Ամեն տեսակ պատիճաւոր հատիկներ արւում են իրեւ յաւելեալ կեր ձիերին ու եղներին 4—8 ֆունտ օրտկան, իսկ կթան կովերին՝ ոչ աւել քան 2—3 ֆունտ:

### Բ. ԶՈՒՐ ՏԱԼԻ:

Առհասարակ լակ են ասւում այն ամեն հեղուկները, որոնք ծառայում են կենդանու կերած կերակրի փափկացնելուն և նրա ծարաւը կոտրելուն: Մաքուր ջուրը այդ նպատակի համար ամենալաւ միջոցն է: Անսունների ծարաւը առաջ է գալիս ամբողջ մարմնի ջրի պակասութիւնից, թէ իրեւ մէզ արտաթորելով, թէ իրեւ քրախնք դուրս առաջ, և թէ թոքերի նշառութեամբ բաժանելով, և որքան շատ է լինում այդ սպառումը, այնքան էլ սաստիկ է լինում ծարաւը: Սակայն ծարաւը միշտ անսանի ամբողջ մարմնի մէջ եղած ջրի պակասութեան հետևանքը չէ: Սաստիկ չոր, տաքացնող կամ աղի կերը գրգռում է ստամոքսը և միաժամանակ ծարաւցնում:

Թէ ջուրը անսասունների կեանքի մէջ ինչ մեծ նշանակութիւն ունի, հարկ չկայ այդ սպացուցանելու Բոլոր զիւղական անասնատէրերն էլ լաւ գիտեն, որ անսասուններին տալիք ջուրը լաւ յատկութիւն պիտի ունենայ, բայց սովորաբար շատ քիչ ուշագրութիւն են դարձնում զրայ վրայ, որի հետևանքը լինում է նրանց այս դարձնում զրայ վրայ, որի հետևանքը Զրի վատ յատկութիւնները արտաքուստ միշտ չէ կարելի իմանալ, բայց երբ նրա համը կամ հոտը առնում ենք, այն ժամանակ կարելի է նրան գնահատել:

Լաւ ջուրը պիտի լինի մաքուր, առանց հոտի, մնացով չպիտի տականք թողնէ, դուրեկան ու զովացնող, ինչ-

պէս ասում են, քաղցր համ պիտի ունենայ և չափաւոր ցուրտ լինի:

Գետի ու աղբիւրի կակուղ ջուրը անտառների համար աւելի լաւ է, քան ջրհորի կոշտ ջուրը: Ճահճներում և աւազաններում կանգնած հոտած ջուրը, որը կարգին հոսանք չունի, և թէ անձրեներից գոյացած առուներին ու լճակներինը շատ անդամ վասնգաւոր հիւանդութիւնների պատճառ է լինում և, հօտերում արիւնալուծութիւն և ախֆի տաքութիւն առաջ բերելով, կոտորած անում: Մանաւանդ ամառ ժամանակ այդպիսի ջուրը վնասակար է, որովհետև իր մէջ շատ փտած նիւթեր է ունենում.

Նոյնպէս վնասակար է այն ջուրը, որի մէջ վուշ ու կանեփ են թրջոց դնում: Կանգնած ջուրը խմելիս, անասունները, բացի նրա հետ մեծ քանակութեամբ փտած բուսական մնացորդներ կուլ տալուց, կուլ են տալիս և շատ որդերի ու ճիճուների ձւաներ կամ մանրէներ, որոնք յետոյ կենդանու մէջ զարգանում են և վնասում:

Բոլոր ձեռնասուն անասունները ջրհորի ջուրը ագահութեամբ են խմում, բայց որովհետև այդպիսի ջրի մէջ շատ աղեր են լինում, ուստի վնասում է նրանց առողջութիւնը և նրանց աղիքներում ու միզափամփուշտում քարեր գոյացնում, իսկ կաթնասու կովերի կաթը՝ քչացնում:

Շատ ցուրտ ջուրը կենդանու ներսը յանկարծ ցրտացնելով և արեան ջերմութիւնը ցածացնելով, երբեմն ծանր հիւանդութիւններ է առաջ բերում, օրինակ, զանազան բորբոքումներ, հորթատիլ, մանաւանդ երբ անասունը սաստիկ ծարաւած է, տաքացած, քրանած և գեռանօթի, շատ ջուր են տալիս:

Զիւնաջուրը շատ վնասակար է բոլոր գիւղական անասունների համար, մանաւանդ երբ նրանք ծանրացած

են. դրանից էգերը վիժում են:

Զուր տալիս որպէսզի անասունը չմրսի, պէտք է յայտնի նախազգուշութիւններ բանեցնել, այն է անասուններին չքշել ջրի տանելուց, և եթէ նրանք տաքացած են, հանգստանալու ժամանակ տալ: Երբ տաւարին ջրհորի ջուր են տալիս, կարելի է ձմեռը ուղղակի խմացնել, իսկ ամառը ընդհակառակն մի առժամանակ տաշտի մէջ թողնել, որ տաքանայ<sup>1)</sup>:

Զիւրին օրական երեք անդամ պիտի ջուր տալ, իսկ ամառը, գործի ժամանակ չորս անդամ. տաւարին ու ոչխարին բաւական է ձմեռը օրական 2 անդամ ջրել, այն է առաւ օտեան չոր կեր տալուց յետոյ և երեկոյեան:

### Գ. Ա. Ր Օ Տ Ա Տ Ե Ղ Բ:

Անասուններին արօտատեղում արածացնելլը ոչ միայն նպաստում է նրանց առողջութեան, այլ և միքանի տեղերում կերակրելու ամենաձեռնուր միջոցն է:

Ամեն տեղ յայտնի է, որ գիւղատնտեսական ամենագեղիկ և լաւ կենդանիները առաջ են գալիս այն տեղերում, ուր ընդարձակ և լաւ արօտատեղեր կան. բոլոր օտար երկրներից սերունդը ազնւացնելու համար մեզ մօտ բերւած ընտիր տաւարն ու ոչխարը միայն այն տեղերումն են լաւ մնում ու չեն այլասեռում, որտեղ լաւ և ընդարձակ արօտատեղեր կան:

Միայն, ինչպէս գոմում պահելիս, այնպէս էլ արօտատեղում արածացնելիս այս ու այն նախազգուշութիւնը եթէ չբանեցւի, անասնի առողջութեան համար վատ հետեանքներ են առաջ գալիս:

<sup>1)</sup> Այն ջրհորները, որոնք շատ խոր են, ամառ ձմեռ միենոյն տաքութեան ջուր ունեն, որովհետև դրանց վրայ եղանակի վոփութիւնը չէ ներգործում, դրանից էլ ջրհորի ջուրը դրսի օդի հաւաքատութեամբ ամառը շատ ցուրտ է լինում, իսկ ձմեռը աւելի տաք, քան գետերի ջուրը

Գարնանը կերակրի պակասութիւնից գիւղացիք շատ վաղ են տաւարն ու ոչխարը արօտ հանում, որից թէ նրանք են վնասում և թէ արօտները. քաղցած անասունը արօտատեղ դուրս բերւելով և նա քաղցը կոտրելու բաւականաչափ կեր չգտնելով այնտեղ, ուտում է պատահած խոտը, որի մէջ լինում են և նրանց առողջութեան վնասակարներ. Մինչև անգամ մատաղ խոտը փորը լուծելու յատկութիւն ունի. բացի դրանից, գարնանը, երբ գեռ եղանակը փոփոխական է, անասունները արօտներում ենթարկեում են անձրեային ցուրտ եղանակի ազդեցութեան. Վերջապէս գարնանը սովորաբար արօտատեղը աւելի խոնաւ է լինում, հեշտ է կոխկոտում, պնդանում, մանաւանդ որ անասունները բաւականաչափ կեր չգտնելով, անդադար մի տեղից միւսն են անցնում: Դրա համար էլ առաջին երկու շաբաթը անասուններին արօտ հանելուց տուած, պէտք է քիչ չոր կեր տալ: Ամառը զով օրերին կարելի է բաց, լիոնային տեղերում արածացնել, իսկ տաք օրերին ծառերի շաքում եղած արօտները ընտրել: Որչափ կարելի է վաղ պիտի համել և թողնել ոչ տւելի, քան առաւօտեան ժամը 10-ը, երկրորդ անգամը արօտատեղ քշել ոչ առած, քան երեկոյեան ժամը 5-ը, և եթէ հնարաւորութիւն կայ, ձիերին և տաւարին յաճախակի լրդացնել:

Մայիս և յունիս ամիսներին, փշատերև ծառերի ծաղկելու միջոցին, չպէտք է անասուններին անտառային արօտները քշել, որտեղ խոտը ծածկւած է լինում այդ ծառերի հիւթալի փոշիով, որը պնդացնում է ստամոքսի միջի կերը և անտառային տաւած հիւանդութիւնն առաջացնում:

Ոչխարների համար պէտք է ընտրել տւելի նօսր և որչափ կարելի է տւելի քիչ խոնաւ արօտատեղ և հսկել որ նրանք առուներից ու լճացած ջրերից ջուր չխմեն:

Ինչ որ վերը յիշւած է մարգագետինների համար, նոյնը և վերաբերում է արօտատեղերին:

### Դ. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ:

Մեր գիւղական անասութեան մէջ շատ քիչ է պատահում, որ գոմանոցը, ախոռատունը, փարախը շինելիս աչքի առաջ ունենան անասունների առողջութիւնը և նրանց ցուրտ եղանակի ազդեցութիւնից պաշտպանելու ապահովութիւնը: Գոմը, ախոռատունը, փարախը կամ խողանոցը սովորաբար մի նեղ առանց լուսամուտի շինութիւն է, մէջը երբեմն ձողերով բաժանած, որտեղ բոլոր տեսակ անասուններն են պահուում: Անասունների բնակարանը մէծ մասամբ շինում են փոս ընկած, ցած ու խոնաւ տեղերում, կոճերից, փայտէ ցանկապատով (չափարով) և կաւացեխով ծեփում, որը քիչ ժամանակից ընկնելով, ճեղքեր են բացւում: Անասունների տակը փոելու բաւականաչափ ծոյտ կամ դարձանի տականք չունենալով, հետզհետէ աղբը մաքրելուց հողն էլ քերւում է և ժամանակով խորդուբորտներ կազմուում, ուր լճանում են անասունների մէզն ու անձրեկի ջուրը: Այդպիսի բնակարանները ոչ միայն չեն ապահովացնում անասուններին արտաքին ազդեցութիւնից, այլ ընդհակառակն իրենք են վատ ներգործում նրանց վրայ:

Անասունների արտաթորութիւնները, աղբի (թրքի) հոտելը ցած, նեղ ու օգը սակաւ բնակարաններում կուտարեցնում են կենդանու շնչառութիւնը, արեան շրջադիւրեցնում են կենդանու շնչառութիւնը, արեան շրջադիւրութիւնը, զրգուում թոքերն ու կաշին և կենդանագարձութիւնը, զրգուում թոքերն ու կաշին հիւանդութիւնների արամաղիք անում: Այսուն շատ հիւանդութիւնների արամաղիք անում: Այսուն պէս, առաջացնում են հաղ, աչքերի բորբոքում, արեան պէս, առաջացնում են հաղ, աչքերի փորբոքում, արեան ուղեղին խփելը, փորլուծութիւն (մալթ), ձիերի տիֆ, կաշու զանազան հիւանդութիւններ, ինչպէս քոս (լաշան), և այլն: Հիւանդ անասունները այդպիսի բնակարաններում գժւարութեամբ են առողջանում: Յանուոր տաւարը թէ տաքացած, թէ քրանած և թէ անձրեկից թրջւած, եթէ այդպիսի բնակարանում պահենք, բարձրացած դո-

լորշիներից օդը կանպէտքանայ չնչառութեան համար։ Օդը մաքրելու համար, եթէ անկարելի է պատուհանները բանալ, գոնէ պէտք է աշխատել, որ միջի աղբը չլուծւի, վրան տմեն օր գիշերները կիր շաղ տալով։ մի ֆունտ կիրը բաւական է 2—4 զլուխ մէջը տաւար պահւող գոմանոցին։

Ինչպէս չափազանց տաքութիւնը, այնպէս էլ բնակարանի շատ ցրտութիւնը վնասակար է։ Ցրտութիւնը դժւարացնում է գիրացնելը, անասունների մաղը երկարում է, փոքրերը դանդաղ են զարգանում ու մեծանում, կթան տաւարը քիչ կաթ է տալիս, վերջապէս զրանից շատ հիւանդութիւններ են առաջանում,

Բնակարանի տաքութիւնը պէտք է յարմարեցնել  
անասունների այս ու այն պահանջին, նայելով նրանց  
տեսակին ու նպատակին։ Առհասարակ կարելի է ասել,  
որ դեռահաս, ազնիւ տեսակի անասունները, որ աւելի  
քնքոյշ են, նուրբ կաշի ու մազ ունեն, աւելի տաք բնա-  
կարանի պահանջ ունեն, որովհետև նրանք ցըտէն  
զգալուն են։

Բնակարանի տաքութիւնը գոմանոցի, ախոռուտան և թէ փարախի՝ չպէտք է թէօմիւրի 8<sup>0</sup>-ից պակաս լինի, և ոչ էլ 16<sup>0</sup>-ից աւելի:

Զափաւոր լոյսը բնակարաններում անասունների վրայ աշխոյժացնող ու կազդուրող ներգործութիւն ունի: Առատ լոյսը ճերմակ պատերից արտացոլելով, սաստիկ գրգռում է աչքերը և տեսողութիւնը թուլացնում: Մուլթ բնակարանը անասունների համար վկասակար է, նրանց արամազը ուրում է այնպիսի հիւանդութիւնների, որոնք նպաստում են ոյժերի թուլանալուն և արեան փչանալուն: Այդպիսի գոմերում բոլոր հիւանդութիւնները թէ դժւարութեամբ են բժշկում և թէ երկարատե լինում:

Մթան մէջ պահւող անաստվնները թուլանում են,

ծուլանում և տրտում պատկեր ունեն: Մութ բնակարանները օգտակար են միայն այն անասունների համար, որոնց առանձնացնում են դիրացնելու համար. մութը օգնում է ճարպի կազմակերպւելուն: Բնակարանների լոյսը լաւ է. եթէ վերեկից է ընկնում, ետեկից կամ կողքից, և ոչ ուղղակի աշքերին ընկնում:

Բնակարանի մեծութիւնը՝ Ախոռատան (Ճիանոց),  
ձիերի կանգնելու տեղը պէտք է լինի  $3\frac{3}{4}$  արշինից մինչև  
 $4\frac{1}{2}$  արշին երկայն և 1 արշին 10 վերշոկից մինչև 1  
արշին 14 վերշ. լայն. Զիերի ետևի կողմից պէտք է մաս  
գալու համար տեղ լինի 1 արշ. 10 վերշ. ապա ուրեմն  
ախոռատան լայնութիւնը պիտի լինի, եթէ մի շարք ձի է  
կապւում, իր անցքի հետ  $5\frac{1}{2}-6\frac{3}{4}$  արշին. Բայց եթէ  
երկու շարք է կապւում և անցքը մէջտեղից է, այդպիսի  
ճիանոցի լայնութիւնը պիտի լինի 10—12 արշին, իսկ  
բարձրութիւնը պէտք է  $4\frac{1}{4}-5$  արշին լինի:

ՏԵՐԱՊՈՒՅԻՆԵՐ կամար պէտք է 3  
Տաւարի զոմբը ՄԵծատաւարի համար պէտք է 3  
արշին երկայն և 1 արշին 10 վերշ. լայն տեղ ամեն մի  
գլխին, ետևի կողմից անցքի համար 1 արշ. 10 վերշ.  
իսկ բարձրութիւնը պիտի լինի 4—5 արշին:

Փարավունքը և առաջարկը է երկու  
արշին երկայն և մի արշին լայն տեղ։ Բարձրութիւնը  
3—4 արշին։

Խոզանցը Զագ ունեցող մայրերի և թէ չաղացնե-  
լիք վարագների համար պէտք է երկու արշին լայն և  
երեք ալիշին երկայն տեղ:

Առաջ արշու եղայութեայ պէտք է առատ, մաս 0.6ասունների տակի փուածքը պէտք է առատ, մաս քուր ու չոր լինի, մանաւանդ բանւոր ձիերի համար: Թէ քիչ փուածքը և թէ թացը անսանին հանգստութիւն և քնի չի տրամադրում, որի համար էլ ձիերը ամբողջ զիշերը մնում են ոտի վրայ, որով չեն կարողանում աշխատանքի վրայ կորցրած ուժերը վերականգնել, կորցնում

Են սաքերի ամրութիւնը որից և առաջանում է սաքերի գողգողալը, գնալիս յաճախ սլկում են (սոթ տալ, բուզուրմիշ լինել), աշխատանքի ժամանակ թուլանում և այն:

Իսկ երբ անասունը ատկը բաց պառկում է, թմբեց-  
նում է կաշին, մկանունքը, թէև առատ կերպակը ելիս լի-  
նի, այնուամենայնիւ, կասես քաղցած լինի. Ամենալաւ  
փոռցը համարւում է ցորենի, գարու, աճարի ծզօտը  
(քիւլաշը): Եթէ ծզօտ չլինի, կարող են ծառայել և խա-  
շեմնը (չոր տերեները) չոր մամուռը, ձիերի չորացը ած-  
աղը, և այլն: Կանաչ կեր և կամ ջրալի տականք ուտաց-  
նելիս՝ փռւածքը աւելի ևս առատ պիտի լցուի տակները:

Ե. ԱՆԱՍՈՒԻՆԵՐԻՆ ՄԱՔՐԵԼԸ (ԹԻՄԱՐԵԼ):

Ընտանի անասուններին խնամելու գլխաւոր պայմաններից մինն էլ համարւում է նրանց կաշու մաքրելը։ Մարմինի այդ արտաքին ծածկոցը շատ նշանաւոր պաշտօն ունի. նա է, որ կաշու արտաշնչութեամբ հանում է մարմինից անպէտք նիւթերը։ Դրա համար էլ, եթէ կաշու միջոցավ քրտինքը զուրս չգայ և կաշու կեղաստելով ցեխից, փոշուց, թեփից (քեմուխտ) կամ մաղերի քըրտինքից կամ կաշու ճարպից կաչելուց, այդ յիշւած անպէտք նիւթերը անասնի ներսը մնան, զանազան շատ անդամ վտանգաւոր հիւանդութիւններ են առաջ բերում։ Բացի դրանից, կաշու անմաքուր պահպաննելը տրամադրում է մորթու այլևայլ հիւանդութեանց, ինչպէս քորի, քոսի, և այլն։ Ընդհակառակն յաճախ մաքրելուց (քորելուց) մազը կամ բուրդը կոկում է, կաշին փափկանում և զանազան պարագիտներից, ինչպէս և քոր բերող ոջիններից ազատում է. քորելով՝ մազի փոխելը (թարշիս տայր) արագանում է։

Զմեոը կաշին քորելու համար բաւական է զաշին ու խողանակը, իսկ ամառը, բացի դրանից, պէտք է ջրի մէջ

անասուններին նաև լողացնել։ Մաքրելով, կենդանու կաշին գրգռում է և օգնում մարմնից անպէտք նիւթերի դուրս գալուն, իսկ շոգ եղանակին անսանին լողացնելը կամ լւանալը զովացնում է։ Քորելը պիտի լինի ամեն օր, առաւտեան վաղ, և որպէսզի քորելուց բարձրացած փոշին շնչափողը չմտնի կամ ախոռների կերի վրայ չնստի, պէտք է պայծառ օրերին դրսի բակում մաքրել, իսկ վատ եղանակին՝ ծածկոցի (չարդախի) տակ։

Ամեն աւել տարածւած է այն նախապաշտումը, թէ չպէտք է քուռակներին մաքրել, բայց այդ մեծ սխալ է, որովհետև քուռակի նուրբ կաշին աւելի զգայուն է անմաքրութեանց, քան թէ մեծ կենդանիներինը. դրա համար էլ աւելի մեծ հոգս պիտի տանել նրանց մաքրելուն, միայն առաջին տարին քուռակներին կարելի է մաքրել խողանակով:

Տաւարը ոչ միայն չեն մաքրում մեղանում, այլ և  
շատերը նրա առողջութեան վասակար են համարում:  
Այդ նախապաշտամումը երեխ առաջ է եկել նրանից, որ  
դժւար է անասնի մորթը մաքրուր պահել: Ճիշտ է, տա-  
ւարը այնքան յաճախ հիւանդութիւնների չէ ենթարկ-  
ում և ձիերից լաւ է գիմանում վասակար ազդեցու-  
թիւնների, բայց և այնպէս նրան մաքրելը աւելի բա-  
րերար ազդեցութիւն է ունենում նրա առողջութեան  
վրայ և չաղացնում: Կթան կովերը, որոնք ամեն օր մաք-  
րում են, աւելի համեղ կաթ են տալիս և առանձին  
հոտ չեն ունենում: Կովի ծծերը մանաւանդ պէտք է  
շատ մաքրուր պահել, միայն ձմեռը չպէտք է ցուրտ ջրով  
լւանալ, որից կաթը նւազում է, չպէտք է նոյնպէս  
լւանալ այն ժամանակ, երբ կթում են, որովհետեւ ջուրը  
ծծերից կարող է կթողի մատներով անցնել և կաթը  
կեղտոտել: Լաւ է այդպիսի դէպրում սրբիչ ունենալ և  
ձմեռը գոյ ջրով ծծերը լւանալ:

Զիերին ամեն անգամ մաքրելիս, պէտք է սմբակներին նայել, քերել ու մաքրել սմբակի տակը չորացած ցեխն ու աղբը, ուշադրութեամբ նայել պայտերին (նաւերին) և եթէ թուլացած են, ամրացնել, իսկ կոտրւած մեխերը զգուշութեամբ հանոտել: Եթէ այդ բաներին ուշը չգարձնենք, կարող է սմբակը լաւ չզարգանալ, կը ճաքճքի, փխրուն կդառնայ կամ կուռչի:

#### Զ. Զիերին ՈՒ ՏԱԽԱՐԻՆ ՍՇԽԱՑԵՑՆԵԼՈՒ ԺԱՄՄԱՆԱԿԸ:

Զիերին կարելի է լծելու վարժեցնել միմիայն չորսորդ տարին, բայց աշխատեցնել չորս տարին լրացած: Եզներին կարելի է վարժեցնել երրորդ տարին, օր ընդ մէջ կամ երկու օրը մի անգամ միքանի ժամ լծելով, բայց շարունակ բանեցնելու համար երրորդ տարին անցած պիտի լինի: Դեռահաս անասուններին աշխատանքի վարժեցնելը պէտք է յանձնել փորձւած ու համբերատար մարդկանց, որովհետեւ անասնի յետազայ աշխատութեանց վերաբերութեամբ այդ առաջին քայլը մեծ նշանակութիւն ունի: Սովորաբար ջահէլ ձիաներին լծում են չափահաս և արգէն վարժւած, դուրս եկած ձիու հետ թեթև կառքի և ամեն օր պտտեցնում:

Զիերի լծելու սարքը պէտք է յարմար լինի, նա չը պէտք է քերի կամ ուռցնի վիզը կամ կուրծքը, անուշագլիքը թողնելով, կարող է այնպիսի խոր վէրքեր առաջացնել, որի համար կհարկաւորւի կանոնաւոր բժշկութիւն, մինչև անգամ վիրաբուժական դործիքների դործադրութիւն: Այդպիսի գէպքերում անասունը երկար ժամանակ կարող է աշխատելու անկարող լինել:

Անյարմար, նեղ կամ լայն սարքը անասնի շարժողութիւնը կանգնեցնում է, շտապելու պատճառով աշխատանքի ժամանակ նա ուժից ընկնում, յոգնում է: Նեղ փղկապը (ԽՕՄՅԴԵ) որկորը ճնշելով, դժւարացնում է շըն-

չառութիւնը և այդպիսով թոքերի հիւանդութիւն առաջցնում: Վղկապ ընտրելիս, պէտք է աչքի առաջ ունենալ անասնի մարմնակազմը, այն է վղի ձեր, թիակները և բաշի ետերը: Վղկապը և իր աստառը պէտք է առածկական լինեն, փափուկ շինւած և ձիու շարժողութեան ժամանակ պէտք է զլաւորապէս թիակների առաջից ընկած լինին ու շեղ ուղղութիւն ունենան վերից և ետերից գէպի ներքեւ ու դէպի առաջ: Լծասարքի կաշեայ մասերին պէտք է յաճախ ճարպ բսեր, որ փափկի և անձրկից կաշին չպնդանայ: Այդպիսով միայն հսարաւոր է անասնի վիզը սեղմւելուց, կըծւելուց ազատ պահել: Տանի վիզը սեղմւելուց, կըծւելուց ազատ պահել: Տաւարի համար վերջին ժամանակներում անյարմար վղի լուծի փոխարէն սկսել են գործ ածել բառին լծասարք, որը շատ գործնական է:

#### Է. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՍԵՐՈՒՆԴԸ ԲԱԶՄԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ:

Սերունդը բազմացնելու նպատակով չպէտք է շատ դեռահասներին, ինչպէս և շատ ծերերին գործադրել, որովհետեւ այդ դէպքում սերունդը սովորաբար թոյլ է լինում և ծնողներից ոչ թէ նրանց արժանաւորութիւններն է ժառանգում, այլ շատ անգամ նրանց պակասութիւնները:

Սերունդ շատացնելու համար կարելի է գործ ածել որձ ձին (այդը) 5 տարեկանից, ցուլը (բուղա) և կովը  $2\frac{1}{2}$  տարեկանից, մաքին (էդ ոչխարը) և լողը՝  $1\frac{1}{2}$  տարեկանից:

Էդ հորթերի վաղ բեղմնաւորելը, առանց վերոյիշեալ սահմաններից անցնելու, ձեռնառու է, որովհետեւ անսունը շուտով է կթան դառնում, իսկ եթէ նա գիրացնելու պիտի վեղմնաւորելը պիտի ուշ կատարուի:

Թէ հիւանդ և թէ ժառանգական այս ու այն պակասութիւնը ունեցող անասնին չպէտք է թողնել, որ բեղմնաւորւի և սերսնդ ունենայ:

Պատահում է, որ գեռահաս անասունները երկար ժամանակ սեռական ցանկութիւն չեն արաւայատում: Այդպիսի գէպքում որոշ անունդի միջոցով կարելի է երբեմն գրգիռ առաջ բերել: Այդ նպատակի համար հետեւալ կերը պիտի տալ. աղած գարի, ջարդած կամ թրջոց գրած սիսեռ, կանեփի սերմ, և այլն: Նոյնպէս խորհուրդ են տալիս տալ խարանաձնւի փոշի (որօշօք առանց մասին մասին մասակին ու կովին. այդ փոշին վուշի սերմի խաշւի հետ պիտի խառնել և այնպէս ուստացնել:

Իսկ անասունների մէջ յաճախ երեացող գրգիռը մեղմելու համար, երբ նրանց բաւականութիւն տալը անհնարին է, տալիս են  $1-1\frac{1}{2}$  զօլօտնիկ կանֆորայի գեղահատներ օրական 2—3 անգամ:

#### Հ. ԱՆՍՍՈՒՆՆԵՐԻ ՑՂԻԱՆԱԼԸ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԸ

Առասարակ յղիանալու նշան են համարում էզի մէջ սեռական գրգիռի բացակայութիւնը, բայց այդ բանը միշտ ճիշտ չէ, որովհետեւ յաճախ պատահում է, որ սեռական գրգիռը մերձաւորութիւնից բաւականութիւն է ստանում, բայց կենդանին մնում է առանց բեղմնաւորւելու:

Ցղիանալու սկզբին կարելի է նկատել անասնի ագահութիւնը, նրա ծանրանալը, սովորականից յաճախ պառկելը, պոչի հուփ տալը, փորին ձեռք տալուց զգայուն լինելը, կթան կովերի քիչ բայց սերով տոստ կաթ տալը: Այնուամենայնիւ կարող է պատահել, որ այդ նշանները անհնատ մնան, ուստի դժւար է դրանցով յղութեան մասին դատել: Միայն յղութեան կէսից կարելի է զգալ պտղի շարժումը:

Պտղի զարգացման վերայ մեծ ներգործութիւն ունի յղի էզերի խնամատարութիւնը: Լաւ կերակրելը, թէ կերի յատկութեան և թէ նրա քանակի բաւարարութեան կողմից, զլխուոր պայմանն է կազմում: Դրա համար էլ չպէտք է փչացած կեր տալ, ինչպէս բորբոնած ու փտած խոտ, հացահատիկ կամ յարդի մղեղ, ծլած կամ ցուրտը տարած կարտոֆել, վրան ցող գրած խոտ, փորը ուսոցնող կանաչ կեր, քացխած ճաճա, և այլն: Նոյնպէս չպէտք է յանկարծ չոր կերից կանաչ կերի անցնել և սաստիկ ցուրտ ջուր խմացնել: Պէտք է յղի էզերին թոյլ չտալ մեծ թռիչքներ անելու, ծանր ու մաշող աշխատութիւններ կատարելու և արագ ու լարւած վագելու, մանաւանդ ճննդեան մօտերը:

Այդ նախազգուշութիւնները չբանեցնելուց կարող է վիժմունք, դժւար ճննդաբերութիւն կամ մեռած ճնունդ տուած գալ:

Կովերին կարելի է կթել մինչև յղութեան վերջին շաբաթները, բայց երբ կաթը փոխում է իր յատկութիւնը և քչանում, պէտք է դադարեցնել: Սովորաբար կովերին կթելը դադարեցնում են ծննդից վեց շաբաթ տուած:

Ծնունդի մօտ լինելու նշանները հետեւաներն են. փորը կախ է ընկնում և երկու կողմից աճուկները (պախ) գէպի յետ քաշում, ծծերը ուռչում են և ձեռք տալիս զգայուն դառնում, յետոյքից և ծծերից մածուցիկ հիւթ է ծորում և գնալով տեղի նկատելի դառնում:

Այդ միջոցին, յղի էզերին պէտք է ընդարձակ և հանդիսատիկ բնականացնել առաջ կամ ծղոտ կիստ բնակարան տալ և տակը տոստ յարդ կամ ծղոտ փուել:

Կանոնաւոր ճննդաբերութիւնը պէտք է հետեւալ կերպով ընթանայ: Երեսում են նախ երկունքի սաստիկ ցաւեր, անասունը անհանդիսա է, կծկում է, հեղաոցի լայնացած շրթունքների արանքից երեսում է թափանցիկ,

թաղանթաձև փամփուշտը, որը կենդանու ամեն մի ոյժ տալիս, աւելի է առաջ գալիս, յետոյ ճղում և նրանից առատ մաքուր ու կպչուն հեղուկ դուրս գալիս, և հէնց այդ բովէին էլ երկում են առաջին ոտները, նրանց վրայ կրթնած զաւակի գլուխը, դրանից յետոյ, քիչ ընդմիջումներով դուրս է գալիս զաւակի մնացած մասը և դրանով ծնունդը վերջանում է: Ծննդաբերութիւնից քիչ յետոյ, մէկից մինչև երեք ժամ անցած, երկրորդ աննշան երկունքն է լինում, որի ժամանակ զաւակատունն է ընկնում, այն է զաւակին շրջապատող թաղանթը—ընկերը:

Ծննդաբերութիւնից յետոյ, էզը սովորաբար սաստիկ թուլացած է լինում, դրա համար էլ պէտք է լաւ սննդարար կեր տալ, միայն քիչ քիչ, բայց յաճախ: Սնունդը պիտի լինի ծեծած վարսակ կամ գարի, ցորհնի ալիւր, խառն վարսակի կամ գարու յարդի հետ և այն՝ ջրով թրջած:

Կանոնաւոր ծննդաբերութեան ժամանակ էզը պէտք չունի դրսի օգնութեան, բայց լինում են դէպքեր, երբ շուտափոյթ օգնելու կարիք է զգացւում. տէրը պէտք է ինքը օգնութեան հասնի:

Յղութեան ժամանակամիջոցն է մատակներին՝ միջին հաշւով 11 ամիս, կովերին՝ միջին հաշւով 9 ամիս 10 օր, ոչխարներին՝ միջին հաշւով 5 ամիս, խոզերին՝ միջին հաշւով 4 ամիս, շներին՝ միջին հաշւով 2 ամիս:

Եթէ պտուղը յղութեան առաջին կէսին է ծնւում, այդ դէպքը ասւում է վիթմունք և պտուղը աշխարհ է գալիս մեռած, իսկ յղութեան երկրորդ կէսին ծնածը կարող է կենդանի լինել, բայց սովորաբար չէ ապրում, իսկոյն մեռնում է: Զիերը կարող են ծնել 9-րդ ամսում, կովերը՝ 7-րդ, ոչխարները՝ 4-րդ, ծնունդը կարող է ապրել, բայց նրանք տկար ու թոյլ են լինում և երբեք կարգին չեն զարգանում: Երկու կամ երեք շարաթ ժա-

մանակից առաջ ծնածը կարող է բաւականին զարգանալ և ոչ մի պակասութիւն չունենալ ապագայում:

Վիժելու պատճառներն են, հարւածները, վայր ընկնելը, միքանի կերերի վատ ազդեցութիւնը, օրինակ թարմ երեքնուկը, բորբոսնած, հոտած կերը, շատ տաք հացի ճաճան, ժանտախտը, թոքերի հիւանդութիւնը, և այլն:

Եզերը առաջին անգամ ծնելիս յաճախ վիժում են, բայց այդ միշտ վատ հետևանք չէ ունենում, այնինչ մեծերի հետ պատահելիս, այդ վատ նշան է, ինչու որ սովորութիւն է դառնում: Դրա համար էլ պէտք է նախազգութեան միջոցներ ձեռք առնել վերսյիշեալ դէպքերը հեռացնելու: Յղութեան ժամանակ վատ ու անբաւարար սնունդը նոյնպէս պատճառ է դառնում, որ ծնընդեան ցաւի ժամանակ ոյժերի թոյլ լինելուց պառողը չէ դուրս գալիս, մեռնում է զաւակատան մէջ և էզի կեանդուրս գալիս, ապանում է զաւակատան մէջ և էզի կեանդուրս գալիս. այդտեղ ահա պէտք է մասնագէտի օգնութիւնը: Այդպիսի կովին կամ ձիուն պիտի օղու մէջ թրջած միքանի կտոր հաց տալ, եթէ այդ չօգնէ, տալ երիցուկի (ромашկա) նաստոյկի մէջ մի թէյի գդալ մանր ծեծած հացի սունկ (спорыնեա, չլենին բօժոկ), երբ այդ ճարից յետոյ ոյժ գալը սկսի, պէտք է ձեռքը իւղ քսել և պտուղը բռնելով, կամաց կամաց քաշել և դուրս կամ ուղարկութեան պատճառ էր, որ կանոնաւոր ծննդագալուն օգնել: Վերև ասւած էր, որ կանոնաւոր ծննդագալուն ժամանակ առաջ երկում է զաւակի առաջին բերութեան ժամանակ առաջ երկում է զաւակի առաջին ուսները, կճղակները կամ սմբակները դէպի ներքեւ ու նրանց վրայ յենած զաւակի գլուխը: Միւս բոլոր դրութիւնները անբնական են համարւում և ծնունդը կամ շատ դժւար է լինում կամ անկարելի, դրա համար էլ անասնաբոյժի օգնութիւնը կարևոր է դառնում:

Յաճախ պատահում է, որ ծննդից յետոյ ընկերը շուտով չէ ընկնում և նրա մի մասը սովորաբար կախ է ընկնում դրսից:

Ծննդից մի երկու օր անցած, ընկերի չգուրս գալը վնաս չէ առաջացնում, բայց երբ իր օրից անցնում է պէտք է օգնել գուրս բերելուն. այդ նպատակի համար ժամը մի անգամ հեշտոցի (влագալից) մէջ պէտք է կէս-կէս շիշ կտաւատի սերմի եփ տւած ջուրը սրակել, եթէ այդ չօգնի, ոչ ուշ քան ծննդի վեցերորդ կամ եօթներորդ օրը, տալ կովին (մատակ ձիուն ոչ ուշ քան 2—3 օր) խմելու մի գդալ հացի սունկ երեցուկի նաստոյկի հետ խառն, որից յետոյ, սովորաբար 24 ժամ անցնելուց, սկսում է ուժի գալ, և այդ միջոցին եթէ ինքն իրեն ընկերը գուրս չէ գալիս, պէտք է ձեռքով հեռացնել այդ:

Եթէ ընկերը երկար ժամանակ մնացել է, նեխել և հոտած նիւթ է հոսում ծննդական գործարանից, փչացած թաղանթները հեռացնելուց յետոյ, օրական երեք անգամ պէտք է կէս շիշ գուր ջուր սրակել ներսը, ջրի մէջ մի գդալ կարբօւնան թթու կամ բորակաքար (բյոր) խառնած: Այդ և նման գէպքերում, ինչպէս հեշտոցի գուրս գալիս, ծննդաբերութեան տաքութեան ժամանակ, ևայլն, լաւ է անասնաբոյժի օգնութեան դիմել:

### Թ. ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Նորածին անասունները իրենց կեանքի առաջին օրերում ենթակայ են զանազան հիւանդութիւնների, այն է՝ նրանք չեն կարողանում ոտքի կանգնել սաստիկ թուլութեան, փորկապութեան, փորլուծութեան և պորտի ուռչելուն ու նեխելու պատճառով:

Թուլութեան ժամանակ պէտք է կենդանու բերանը թափել իր մօր կաթը կիսով չափ երիցուկ (ромашկա) խառնած, իսկ ոտները կամ փորը սպիրտով արորել և թաղիքով լաւ պատառելով թողնել, որ պառկի հանգը տանա:

Փորկապութեան ժամանակ գրեխ (գաստոր անել)

վնել տաք երիցուկից, մէջը մի քիչ փայտի կամ կտաւատի ձէթ խառնած: Այդ գրեխները դնում են ամեն կէս ժամից քուռակին կամ հորթին մի անգամից կէս բաժակ հեղուկ ներս թողնելով, բացի զրանից, մի թէյի գդալ դառնաղ (горькая соль) լուծել եփած կտաւատի սերմի ջրի մէջ և միանգամից տալ անասնին ամեն երեք ժամից, մինչև փորը կբացւի, կամ թէ մի թէյի բաժակ լուծուղական (գերչակի ձէթ) խառնած:

Սաստիկ լուծի կամ ներմակ լուծի ժամանակ, երրարածթորութիւնը շաղած կաթի է նմանում և թթու հոտ ունի, ամեն երկու ժամից տալ մի թէյի բաժակ մազնէզի կամ կէս բաժակ գարծիլի (ревень) արմատի փոշի երիցուկի նաստոյկի մէջ խառնած:

Պորտի ուռչելն ու նեխելը: Բանի գեռ ուսեցքը տաք է, վրան շուտ-շուտ պէտք է դնել գուլեարդի ջրում (гүлярдовая вода) թրջած փալաս. Եթէ ուսեցքը չանցնի և պորտից ժանր գայ, պէտք է երիցուկի ջրով շուտ-շուտ լահալ. բացի զրանից, մի բարակ լարի ծայրին մի փոքրիկ սպունդի կտոր կապել և թաթախել մի գդալ օդու, երկու գդալ ջրի և <sup>1/8</sup> թէյի գդալ մաքուր կարբօւնան թթւուտի խառնութի մէջ և պորտի ծակից մի վերշոկ խոր ներս տանել:

Մօր առաջին կաթը դիղին գոյն ունի, նա առւում է դալ (МОЛОЗИВО). Նա լուծ է պատճառում փոքրերին, և այդ բանը տեղիք է տւել կարծելու, որ նա վնասակար է, զրա համար էլ կթում, դէն են ածում: Մինչդեռ ընդհակառակը, այդպիսի կաթը ընութիւնը ինքն է նշանակել ինչպէս միջոց նորածին անասնի ստամոքսի և աղիքների մէջ գտնւած զանազան կեղաերն ու մազասը (լորձիւնքը) մաքըելու: Այդ կաթը կարող է վնասել միայն այն ժամանակ, երբ նորածինը չափազանց է ծծում, այդ դէպքում հարկ կինի երբեմնակի կաթից կտրել:

Ժ. ՓՈՔՐԻԿ ԱՆԱՍՈՒԻՆԵՐԻՆ, ԿՐԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Փոքրիկ անասուններին իրենց կեանքի առաջին շրջանում կերակրելու և կրթելու եղանակը մեծ ներգործութիւն ունի նրանց ապագայ զարգացման ու կազմաձրի վրայ: Դրա համար էլ անասնատէրը հէնց առաջին օրից պէտք է աշխատէ, որ փոքրիկ անասնի կեանքը զարգացման տեսակէտից ապահովւած լինի: Առաջին շաբաթներին ամենաընտափը կերը մօր կաթն է: Քուռակները, գառները, խոճկորները (խողերը) սովորաբար թողնում են մօր հետ, մինչև որ կարողանում են իրենք իրենց ուրիշ կեր ուտել և ծծից կարւել:

Հորթերի վերաբերութեամբ ուրիշ ուղղութիւն պիտի բռնել, քանի որ կաթը անտեսութեան մէջ արդիւնաբեր նիւթ է կազմում: Սակայն այդտեղ էլ որոշ չափ պիտի պահպանւի, հորթերին պիտի թոյլ տալ, որ առժամանակ մօրը ծծեն, որովհետեւ այդ թէ իրենց համար օգտակար է և թէ կովի: Երբ հորթը ուղղակի ծծում է մօրը, գըրգուում է նրա ծծերը և մեծ քանակութեամբ կաթ արտադրելուն նպաստում: մանաւանդ այդ օգտակար է առաջին ճնունդ ունեցող կովերի համար: Այդ բնական եղանակով հորթերին կերակրելը այն առաւելութիւնն ես ունի, որ ուրիշ ոչ մի դժւարութիւն չէ ներկայացնում:

Այնտեղ, ուր անասունը պահելու գլխաւոր նպատակը կազմում է կաթը, արդէն ճնուդեան չորրորդ շաբաթից հորթերին սովորեցնում են մանր ու մատղաշ խոտ ուտել և ջրախտոն կաթ խմել, որին յետոյ փոխարինում են կաթի շիճուկը կամ ալբաջուրը: Օրական հորթին տալիք կաթի քանակը կախւած է նրա հասակից: Մօրից խկոյն յետ քաշւած հորթին պիտի տալ օրական թարմ և դեռ տաք չորս շիշ կաթ, յետոյ այդ քանակը հետզհետէ պիտի տեղացնել մինչև վեցերորդ շաբաթը, որից յետոյ, ինչպէս վերև առւած է, մաքուր կաթին հետզհետէ փո-

խարինում է կաթնաջուրը, շիճուկը, ալրի շփոթը աճարի, վարսակի: կամ գարու ալրից: Նոյնպէս տալիս են սիսեռի ապուր (ըստ) և վրան ընտիր խոտ:

Մեծ հորթերին պէտք է օրական գոնէ երեք անգամ ջուր տալ, փոքրերին յաճախ, բայց քիչ քիչ: Առասարակ ամեն մի նոր տեսակ կեր կամ շփոթ ուտացնելիս պէտք է հետզհետէ վարժեցնել:

Երեք ամսական հորթերին կարելի է տալ վարսակ կամ գարի, ալրի թեփ օրական 3—4 ֆունտ ջրով թըրջած: Շփոթին կարելի է խառնել կտաւատի քուսպ և ընտիր խոտ, որը հետզհետէ պիտի շատացնել, այնպէս որ 3 ամսական հորթը ստանայ օրական 2—3 ֆունտ, իսկ առաջին տարւայ վերջին՝ 8—10 ֆունտ, այդ ժամանակամիջոցին կարելի է և հորթերին վարժեցնել ջրուկ կերակրի, քիչ սննդաբար արմատապուղների և արօտում արածելու:

Ծծից կարած գառներին պէտք է մարդի ընտիր չոր խոտ և ծեծած վարսակ տալ, գառները աւելի չոր կեր են պահանջում, քան հորթերը: Իւրաքանչիւր տասն հատ գառան օրական պիտի տալ մօտ 5 ֆունտ խոտ և  $1\frac{1}{2}$  ֆունտ ծեծած հացահատիկներ:

Քուռակների մօրը ծծելու ժամանակը զանազան է լինում: Զիու գործարաններում (զաւօդում) քուռակներին ծծեցնում են 5—6 ամիս, գիւղատնտեսութեան մէջ այդ անկարելի է, որովհետև երբ երկար ծծում են և այն՝ աշխատութեան ժամանակ, մայրերը դրանից մաշւում են, մանաւանդ, եթէ ծնելուց յետոյ նորից իսկոյն զուգաւորում են (այդը են ձգում):

Յամենայն դէպս չպէտք է քուռակը ծծից կարել մինչև երեք ամիսը չանցնի, որովհետև այդ բանը կարող է վնաս բերել նրա ապագայ զարգացմանը: Ծծից կարելն էլ հետզհետէ պիտի լինի և ոչ մի անգամից:

Երբ քուռակը սկսում է վարսակ կամ գարի ուտել,

պէտք է տալ օրական 3—5 ֆունտ։ իսկ երկու տարեկան քուուակը օրական 10 ֆունտ զարու պէտք ունի։

Բնդարձակ, մաքուր, լոյս, ազատ ու առատ օդ ունեցող բնակարանը անասնի զարգացման և ոյժի վրայ մեծ ազդեցութիւն ունի, իսկ քաղցր վերաբերմունքը՝ կենացնու բնաւորութիւնը մեղմացնում, հնադանդ է շինում։

Խոնկուներին սովորաբար թողնում են չորս շաբաթ մօրը ծծելու, եթէ մասրերը առաջին անգամն են ծնում, մեծ մերունները (մայրերը) կարող են 6—8 շաբաթ կերակրել, եթէ խոճկորների մի մասը մօրթելու համար է նշանակւած։ Երկուշաբաթական խոճկորներին կարելի է վարժեցնել և ուրիշ կերի. այդ նպատակով տաշտի մէջ կոփի կաթ են թափում և նրանց խմացնում հափուուվ (բուռով)։ Երբ նրանք արգէն սովորում են առանց օդնութեան խմելու, կաթի մէջ հաց են բրդում, յետոյ գարու կամ վարսակի ալիւր խառնում և միքանի ժամանակից արգէն կարող են իրենց մօր հետ կերակրւել։ Նոր ծնած խոճկորները շատ զգայուն են ցրտի, դրա համար ել ցուրտ ու անձրեային ժամանակ պէտք է չոր ու տաք խոզանոցում պահել ու տակը միշտ առատ յարդ կամ ծղու փռել։

### ԺԱ. ԱՆԱՍՈՒՆԵՐԻՆ ԲԺՇԿԵԼՈՒ

#### ՊԱԽԱՐԱԿԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

Անասուններին բժշկելու նպատակով և նրանց վրայ գործադրւած վիրահատական միքանի միջոցները ոչ միայն բոլորովին անօգուտ տեղից տանջանք են պահանջանակ անասնին, այլ յաճախ աննշան հիւանդութիւնն անգամ չբժշկելով, ծանր հիւանդութեանց առիթ են դառնում։

Թէ որքան այդ խաբուիկ և նախապաշարմանց վրայ

հիմնւած միջոցները վնասաբեր են, այդ կարող է ամեն մէկը, որ չէ խաբւում զանազան շարլատանների, պայտանների ու ջառահնների խօսքերից, ինքը գնահատել անձամբ գործին խելացի կերպով վիրաբերւելով։

Անկանոն բժշկութեան և վիրաբուժութեան եղանակները հետեւայներն են։

Չիերի ախորժակը գրգուելլ։ Դրա համար քիթը ծռած մեխով ձիու վերի քիմքը (գամաղը) ծակում են ախորժակը զրգուելու նպատակով։ Մեխով ծակուելու կամ չանգուելու դէպքում, կարող են քիմքի մեծ արիւնատար անօթները (գամարները) կարաւել, որի առաջն իսկոյն պէտք է առնել, ապա թէ ոչ արիւնահոսութիւն կարող է առաջ գալ։

Քրածակերի չաճգուելլ եւ նղելլ եղունգով կամ ձիւպսով և ապա վերքերին աղ քսելլ այն նպատակով է, որ ձիու ծակուցը (սանջուն) կտրւի կամ տաւարի փորի ուռչելլ անցնի։ Այդ գործողութէւնը ունի իր վատ հետահանքը. քթի աճառոտ (զրճլլաճն) միջնապատը վնասւելով, ընկնում է, որից առաջանում է քթի մսմսոց (օպքնի), շնչարգելութիւն, անասունը անընդունակ է դառնում ծանր աշխատութեան և արագ վագելու և դրանով իր արժէքը կորցնում է։

Արտեւանունի կտրելլ։ Որպէսզի ձիու ծակուցը և տաւարի փորուռուցքը անցնի, դրա համար կտրում են տչքի անկիւնում գտնուող այն թաղանթը, որ երբորդ արտահունք է առւում և որը ծառայում է տչքի մէջ ընկնու փոշին ու մանը միջատները հեռացնելուն։ Այդ արտահանունքից զրկւելլ, բացի անասնին պատճառած տանջանքից, եթէ նոյն ժամին կուրութիւն չէ պատճառում, շանքից, եթէ նոյն ժամին կուրութիւն չէ պատճառում։

Հեշտ է հասկանալ որ տչքի պահպանութեան հա-

մար ծառայող թաղանթի կարելը ոչ մի ներգործութիւն չէ կարող ունենալ ստամոքսի կամ աղիքների ցաւերի վրայ, որը առաջ է գալիս շատակերութիւնից կամ մըսելուց:

Զիաների ծնօթի տակի գեղձերը ծակոտելը սուր գործիքով, ծակուցներից բժշկելու նպատակով, նոյնպէս ոչ մի ազգեցութիւն չունեն այդ օրինակ ցաւի վրայ:

Բիզով ծակոտելը ձիու գաւական ու ազգբները (բուղերը) և ծակած տեղը սպիրալ լցնելն ու վառելը այն նպատակով է, որ գաւակի կաթւածը, միզափամֆուշտի կամ երիկամունքի բորբոքումը անցնի: Այդ բարբարոս գործողութիւնը յիշեալ հիւանդութիւնները ոչ թէ չէ բժշկում, այլ և, բացի պատճառած սաստիկ տանջանքից, այրւած տեղերի բժշկելն ևս դժւար է դառնում և թէ այդ այրւած տեղերում այլիս մազ չի բանում:

Հեշտոցի մէջ գտնւած երկար ու կոլոր գնդակների կամ խուլերի եղունգով պոկելը, որոնք, սխալմամբ կարծում են, թէ հիւանդութեան նշաններ են, այն ինչ զրանք ծառայում են պաղապատեանի ամրութեան համար: Այդ խուլերը պոկելիս սաստիկ ցաւեցնում են կենդանուն և արգանդի հիւանդութիւն առաջ բերում, այն է բորբոքում, նեխում և անզգայութիւն, որոնք զերջանում են յաճախ կենդանու մահով:

Ծնօթի տակի գեղձերի կտրելը ձիու փորլուծութեան (մայտե) կամ խլացաւի (սառե) դէմ: Այդ գործողութիւնը յիշեալ հիւանդութիւնների առաջը չէ առնում, որովհետեւ այդ գեղձերի ուռչելը և պնդանալը միայն փորլուծութեան և խլացաւի նշաններն են և ոչ պատճառը: Իսկ ջառահները խլացաւը ծածկելու համար կտրում են այդ գեղձերը (խուլերը):

Լնդերի ուռոյցից բաժելու համար տաւարի յետոյքի աղիքից արիւն են առնում, որպէսզի արիւն լուծելը կամ

սիբիրական ախտը բժշկուի: Յետոյքի աղիքի գրգռումը այդ հիւանդութիւններից չէ բժշկում, այլ այդ գործողութիւնը կատարողին սիբիրական ախտով վարակւելու վտանգին է ենթարկում:

Ուների ուղղելը, որ յաճախ գործադրում են կաղելու դէղերում: Այդ նպատակով սովորաբար կամ ոտք կապելով յօդերի ուղղութեամբ, թոկով քաշում են դէղի ծառը, կամ հիւանդ ոտք փաթաթում են կողքի առողջ ոտի հետ և անասնին ստիպում փոսի կամ քոթուկի վրայից ցատկելու կամ վերջապէս հիւանդ ոտի դէմը եղող առողջ ոտք կապում են իրանին և ստիպում, որ անասունը հիւանդ ոտով վաղ տայ: Այդպիսի բժշկութեան անհեթեթ եղանակը ըստ ինքեան հասկանալի է առողջամիտներին:

Կայ և մի պախաբակելի սովորութիւն, որ ամեն գարնան արիւն են առնում անասնից: Գարնանը երբ անասունը երկրագործական աշխատանքների համար աւելի ոյժ է պահանջում, երբ նա ձմեռւայ աղքատիկ կերից անցնում է կանաչ կերի, արիւն առնելը շատ ֆնասկար է և նրան ենթարկում է այս ու այն մաշող հիւանդութեան:

Անասունների պէսովէս հիւանդութեանց, նըսնց պատճառների, նշանների ու բժշկութեան մասին կիսուի գրքից երկրորդ մասում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կենդանիներին իրենց բնութեան համապատասխան	
կերակրելը . . . . .	3—5
կերակրի քանակը . . . . .	5—8
ինչպէս պէտք է կերակրել . . . . .	8—10
Անկանոն կերակրելու վաստակարութիւնը . . . . .	10—11
Չոր կերի յարաբերութիւնը թացի հետ . . . . .	11
կերի պարասառութիւնը . . . . .	11—16
Զանազան կերերի խառնուրդը . . . . .	16—19
Կանաչ կեր ուտացնելիս զգուշութիւններ . . . . .	19—21
Չոր խոտը . . . . .	21—24
Ծոտը կամ դարձանը . . . . .	24—25
Արմատապտուղ բոյսերը . . . . .	25—28
Գործարանական մնացորդներ . . . . .	28—31
Հացահատիկներ . . . . .	31—32
Պատիճաւոր հատիկներ . . . . .	32—33
Չուր տալը . . . . .	33—35
Արօտատեղը . . . . .	35—36
Անասունների բնակարանը . . . . .	37—40
Անասուններին մաքրելը (թիմարել) . . . . .	40—42
Չիերին ու տաւարին աշխատեցնելու ժամանակը . . . . .	42—43
Անասուններին սերունդը բազմացնելու համար գործադրելը . . . . .	43—44
Անասունների յղիանալը եւ ծննդաբերութիւնը . . . . .	44—48
Նորածինների հիւանդութիւնների մասին . . . . .	48—49
Փոքրիկ անասուններին կրթելու մասին . . . . .	50—52
Անասուններին բժշկելու պախարակելի միջոցների մասին . . . . .	52—55

20. Մամիկոնեան իշխաններ Մուշեղ և Մանուէլ  
—Մ. Ռ. Ղազարեանի . . . . . — ր. 30 կ.
21. Միքայել Նալբանդեանի տնտեսական թէօրիան—Եր. Պալեանի . . . . . — „ 25 „
22. Անասնապահութիւն—Ի. Բ. Լիւրամուդրովի (Թարգման.) Մասն Լ-Բնտ. կենդան.  
ինամքը և հիւանդութ. պաշտ. միջոցն . . . . . — „ 30 „
23. Գոլոձ—Ս. Զավարեանի . . . . . — „ 30 „
24. Կանոնագիր շտեմարան. գանձարանի—Ա. Զավարեանի . . . . . — „ 2 „
25. Վարկատու ընկերութեան կանոնագրութիւն (փոխադրութիւն) . . . . . — „ 30 „
26. Հոցահատիկների մարգային կուլտուրան  
—Գ. Ղարազեօքեանի . . . . . — „ 5 „
27. Ի՞նչ բան է զէմսալօն—Ի. Բելօլօնեակու (Թարգմանութիւն) . . . . . — „ 5 „
28. Խճճ մի խնդրիր—րօմանա. խօսք Յ. Թումանեանի, ներդաշնակութիւն Ա. Մայիշեանի . . . . . — „ 40 „
29. Ոգի Հայաստանի—գունատիպ նկար . . . . . — „ 50 „
30. Արտաշէսիյուղարկաւորութիւնը—գունատիպ նկար . . . . . — „ 25 „

Պահեստը գտնում է Միուրեան գրասենեակում:

Հայոց Բակу, Армянский Культурный Союзъ.

«Ազգային գրադարան



NL0295849

21.219

Ելեսրական սպառան „Բազմ”.

Գիշե է 30 ԿՈՊ.